Տեսուչ Պ. Ցարուխիան Ալխազեանց
յԱխալցխայ

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Ա. ՏԱՐԻ Ա. ՀՈԿՏԵՄ. 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Յիսուսի Ծնունդը, Նոր Կտակարան եւ Քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը. Յ. Վ. Մ. 421

ՊԱՏՄԱԿԱՆ. Ձարտարութեան արհեստի եւ վաճառականութեան վերաբերեալ համառօտ տեղեկութիւնք. (շարունակելի, Տարգ.) Ս. Բէկնազարեանց. 428

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իդեական սեռի կրթութիւնը նորա կոչմանը համեմատ. (շարունակելի, Տարգ.) Ռ. Էջմ. 436

ԱԶԳԱՅԻՆ. Դարձեալ Երուսաղէմ եւ Եդիպտահայոց վիճակ. — Ինները որդ տարեդարձ Ձեմարանի Ս. Էջմիածնի. — Տեղեկագիր 1882—3 ուս. տարուայ. — Ծրագիրներ, վարժոցի, (ծխական դպրոցի), դպրանոցի եւ Ձեմարանի. (շարունակելի). 464

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԼՔ—1883

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

Ամբողջը իւրաքանչիւր ամիս մի անգամ կհրատարակվի, բաղկանալով վեց թերթից. այսինքն քառասուն և ութ երեսներից՝ ճանապարհածախսով տարեկան գինն է Ռուսաստանի մէջ 4 ռուբլի.—Տաճկաստանի մէջ 3 արծ. մէճիտ.—Պարսկաստանի մէջ 5 ռուբլի.—Հնդկաստանի մէջ 6 ռուբ.—Եւրոպա (Փարիզ, Լօնդոն, Ցիւրիխ, Բեռլին) 20 ֆրանկ. բաժանորդագրութիւնը կանխավճար պէտք լինի և ամսագրիս տարեգլխից սկսած.

Արտաքուստ եկած յօդուածներից և նամակներից՝ ամսագրիս ուղղութեան և նպատակին վերաբերեալ և յարմար եղածները միայն կընդունվին ի հրատարակութիւն. Յօդուածները պէտք պարզ գրել և ամբողջութեամբ ուղարկել առանց չբռնելէ թողնելու.

Ամենայն գրութիւններ պէտք այսպիսի հասցէով ուղարկել.—ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. Ս. ԷՋՄԻԱԾԻՆ. Въ Редакцію журнала «АРАРАТЪ». Вагаршапатъ.

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ
ԵՒ ՆՈՅՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՆ ՏԵՂԵՐ.

Ազգախաւնի բեմ.

Ազգախաւն	Յովսէփ քհնյ. Բէկնազարեան
Գեորգեակ	Սարգիս քհնյ. Տէր Պօղոսեան
Դգեսիա	Գէորգ քհնյ. Յարութիւնեան
Ղզյար	Յարէն քհնյ. Ղօրդանեան եւ Յովհաննէս Քուշտրէկեան
Մոզդոկ	Թադէոս ա. քհնյ. Խոսրովեան
Պատարապօղ	Բարթուղիմէոս քհնյ. Բէգուլեան
Պետրովսկ	Վահան քհնյ. Տ. Մելքիսեդեկեան
Վլադիկավկազ	Պետրոս քհնյ. Կուսիկեան

Բհատարաբիայի բեմ.

Ակկերման	Աբրահամ քհնյ. Մարուխեան
Գրիգորիօպօլ	Դաւիթ քհնյ. Շահինեան
Եկատերինօդար	Մինաս ա. քհնյ. Բաբեան
Եյսկ	Մարգար ա. քհնյ. Սուրիասեան
Երիւ Հիւն	Դաւիթ քհնյ. Ռէշիշեան
Կարասուբազար	Յովհաննէս քհնյ. Սարըյեան
Կերչ	Օգոստինոս քհնյ Զորայեան
Մելիտօպօլ	Պ. Գէորգ Խարամրզեան
Մօսկվա	Յակոբ ա. քհնյ. Սուրէնեան
Նախիջեւան Նոր	Հոգեւոր Կառավարութիւն Հայոց
Ս. Խալ Խաչ.	Գէորգ քհ. Աղայեան
Ս. Պետերբուրգ	Գէորգ քհնյ. Խանթարմեան
Ոհմբերօպօլ	Օգոստինոս քհնյ. Կոպչակեան
Փիշնեւ	Կոնսիստոր Հայոց
Օդեսսա	Գրիգոր քհնյ. Խորասանճեան
Օրեազար	Օգոստինոս քհնյ. Հայրունի
Օրհեյ	Կարապետ քհնյ. Զորայեան
Հնձնջ	Յակովբ քհնյ. Թօսունեանց

Ա Ր Ա Ր Ա Տ

Թիւ ԺԲ. — ՇԲԱՆ ԺԲ. 1883 ՏԱՐԻ ԺԲ. ՀՈԿՏԵՄԲ. 31

ԿՐՕՆԱԿԱՆ

Դ.

ՅԻՍՈՒՍԻ ՅՈՒՆՈՒՆԴԸ՝ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ԵՒ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԻՐՈՒԹԻՒՆԸ.

Հին կտակարանը իւր բովանդակութեամբ մեզ արդէն յայտնի է: Հին կտակարանից մենք արդէն գիտենք թէ Հրեայք միշտ սպասումիեն Մեսիայի գալստեանը՝ որ պէտք է ընկած մարդկութիւնը վերականգնէր եւ Իսրայելի թագաւորութիւնը հաստատելով՝ յաւիտեանս թագաւորէր բոլոր մարդկային ազգի վերայ:

Մեսիայի գալուստը պէտք է կատարուէր Յուդայի ցեղի իշխանութիւնը չքվերջացած (Ծնն. խթ. 10). Մեսիան պէտք է լինէր Դաւթի սերնդից (Երեմ. իգ. 5). Նա պէտք է կուսից ծնուէր եւ Էմմանուէլ (ընդ մեզ Աստուած) կոչուէր (Եսայ. է. 14.) Նա Բեթղեհէմում պէտք է ծնուէր, իսկ Նորա գոյութիւնը աշ-

խարհի սկզբին (Միք. Ե. 2.): Ահա կանխատացութիւնների ու գուշակութիւնները Մեսիայի ծննդեան համար: Յուդայի թագաւորութեան անկմամբ թէեւ Հրէից թագաւորութիւնը վերջացել էր, եւ Անտիոքի Սելեւկեանց իշխանութեան մի գաւառ էր դարձել, բայց երկրի ներքին կառավարութիւնը դեռ Իսրայէլացի իշխանների ձեռքով էր տնօրինւում եւ օրէնքի սրբութիւնները անթերի կատարելու համար Մակաբեանց նման ընտիր զօրավարները ազգային ուժով ճակատամարտներ էին մղում Սելեւկեանց դէմ: Երբ որ Հռովմայեցիք տիրեցին փոքր Ասիային, Եգիպտոսին եւ Պաղեստինին՝ Հրէից ազգային իշխանութիւնը բոլորովին վերջացաւ, եւ երկիրը չորս մասն բաժանուելով յանձնուեց չորս մարգոց՝ որոնք չորրորդապետ էին կոչւում (Ղուկ. Գ. 1—3.): Այդ ժամանակ արդէն լրացել էր Դանիէլ մարգարէի գուշակած եօթներորդների հաշիւը (Դանիէլ Թ. 26.):

Հրէաստանը արդէն Հռովմայեցւոց գաւառ էր, եւ երբոր Օգոստոս կայսրը կամենալով հռովմէական պետութեան հպատակների թիւը իմանալ հրամայեց աշխարհագիր կատարել, այդ ժամանակ ծնուեց Յիսուս Քրիստոս Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում:

Հերովդէսը, որ կամենում էր մարգարէների գուշակութիւնը իւր վերայ կատարուած համարել տալ, եւ մոտիւր էր Մեսիա հռչակուել իւր իշխանութիւնը բոլոր Հրէաստանի վերայ տարածել աշխատելով. երբ որ լսեց Յիսուսի ծնունդը եւ բոլոր շարժումները, կասկածելով թէ Յիսուսը իւր թագաւորութիւնը կրխլի — որոշեց սպանել նորան, որին ազատեցին նորա ծնողքը, փախցնելով Եգիպտոս:

Հերովդէսը չէր միայն՝ որ մոռացումէր Մեսիա հռչակուիլ, այլ շատերը նոյն իղձն ունեցան՝ ինչպէս Յուդա, Թեւդաս եւլն:

Բոլոր իրանք իրանց մեսիա կարծողների հակառակ, Յիսուս որ իսկապէս Մեսիան էր, երկրաւոր թագաւորութեան ձգտում բնաւ չունեցաւ. որովհետեւ երկրաւոր թագաւորութիւնը որչափ եւ զօրաւոր լինէր, ժամանակաւոր էր. իսկ Մեսիայի թագաւորութիւնը յաւիտենական էր, նորա օրէնքներն մշտնջենապէս պետք թագաւորէին:

Յիսուս Հրէից ակնկալութեան հակառակ փոխանակ երկրաւոր իշխանութիւն վարելու եւ Իսրայէլացւոց ազգը հաւաքելով՝

նոցա վերայ մարմնաւորապէս թագաւորելու, սկսաւ նոցա սրտի վերայ թագաւորել. Աստուծոյ օրէնքն ու արդարութիւնը քարոզելով, նոցա օրինազանցութիւնները պախարակելով, եւ նոցա թերահաւատութիւնը յանդիմանելով: Զարաչար պախարակումէր Հրէից առաջնորդներին՝ որոնք ծերերի աւանդութեանց համար Աստուծոյ օրէնքը զանցառութեան էին տալիս: Ցիսուս իւր մկրտութիւնից յետոյ սկսեց իւր քարոզութիւնները եւ մինչեւ մկրտիչը իւր ծնողաց հնազանդ մնալով աշխատումէր:

Մովսէսի խիստ օրէնքը պէտք է թագաւորէր մինչեւ Ցիսուս Ջրիատոս (Գործ. է. 37.) իսկ այնուհետեւ Ջրիատոսի սիրոյ օրէնքը պէտք է թագաւորէր: Ցիսուսի օրէնքի անփոփումն գրուած է Մատթէոսի աւետարանի ե. Զ. է. գլուխների մէջ: Այդ օրէնքները մարդուս վարքը այնքան ազնուացնում են, որ այլ եւս ճըշմարտութիւնն ու արդարութիւնը պէտք է թագաւորէին աշխարհիս մէջ՝ եթէ հաւատացողները միայն լսող չըլինէին, այլ եւ կատարող:

Այդ պատուէրների մէջ Փրկիչը քարոզումէ որ մեր ներքինն ու արտաքինն համեմատ պէտք է լինին իրար: Մովսէսի եւ Ցիսուսի օրէնքների համեմատութիւնը այն բանի մէջ է կայանում՝ որ Մովսէս՝ կատարուած յանցանքներն է խստիւ դատապարտում, իսկ Ցիսուս՝ յանցանքի ամենափոքր մտան անգամ մտքումն անյանելը՝ արդէն դատապարտուած է համարում: Մովսէս սպանութիւնը դատաստանի պարտաւոր է համարում (Ել. Ի. Օր. Ե.) իսկ Ցիսուս՝ եղբօր վերայ տարապարտուց բարկանալն ու յիմար ասելը: Մովսէս շնութիւնը դատապարտումէ. իսկ Ցիսուս մտքումն անգամ այդ տեսակ բան անցկացնելը արտումբ արդէն կատարուած գործ համարելով՝ դատապարտումէ: Մովսէս պատուիրումէ կինը արձակել՝ արձակման թուղթ տալով (Օր. ԻԴ. 1.). Ցիսուս պատուիրումէ «ով որ իր կինը առանց պոռնկութեան պատճառի կարձակի, արդէն ինքն կնոջ շնանալու պատճառ կըգառնայ եւ ով որ արձակուած կինը առնի, արդէն շնութիւն կըլինի արածը. (Մատ. ե. 31.—32):

Մովսէս պատուիրումէ սուտ չերդուել. եւ երդուելիս էլ Աստուծոյ անունով երդուել. (Ելից Ի. 7, Ղեւ. ԺԹ. 12.): Իսկ Ցիսուս պատուիրումէ բնաւ չերդուել, այլ «այո՝ այո լինի եւ ոչն ոչ»: Մովսէսը վրէժխնդրութիւն է պատուիրում՝ աչքի տեղ՝ աչք,

առաքի տեղ՝ առաք (Նկ. ԻԱ. 24)։ *Յիսուս պատուիրումէ չարին հակառակ մի կենալ* (Մատ. Ե.)։ *Մովսէս պատուիրումէ սիրել ընկերին* (Ղեւտ. ԺԹ. 18.)՝ *եւ թշնամին ատել* (Օր. ԻԳ.)։ *Յիսուս պատուիրումէ թշնամանն սիրել, անիծողներին օրհնել եւն։*

Յիսուսի կեանքն ու քարոզութիւնը մի սքանչելի օրէնք է, որին եթէ հետեւին, արդէն լուսաւորուած ու փրկուած կըլլին մարդիկ։

Ա.ին մարդիկը, որոնք Յիսուսի երկրաւոր կեանքը ու նորա քարոզութիւնները գրեցին՝ կոչուեցին Աւետարանիչներ. եւ դոքա են — Մատթէոս, որ Յիսուսի Յարութիւնից շատ տակաւ յետոյ գրեց իւր աւետարանը եբրայերէն լեզուով, այն հաւատացեալների համար, որոնք Հրէայ էին եւ թլպատուած. Մատթէոս աւելի ընդարձակ եւ պատմական ոճով է գրել իւր աւետարանը։ Մարկոս՝ որ Յիսուսի Յարութիւնից 15 տարի յետոյ գրեց իւր աւետարանը եգիպտացւոց լեզուով՝ համառօտ գրեց. եւ իւր աւետարանը սկսումէ Յովհաննու քարոզութիւնից ու Յիսուսի բժշկութիւններից։ Ղուկաս՝ որ Յիսուսի Յարութիւնից 17 տարի յետոյ գրեց իւր աւետարանը, քաղդէարէն գրեց ընդարձակ ոճով. այս աւետարանն հետաքրքիր է նաեւ մի քանի Հրէից կրօնական արարողութեանց նկարագրութեան եւ ժողովական հանգամանքի նկատմամբ։ Յովհաննէս՝ որ Յիսուսի Յարութիւնից 53 տարի յետոյ գրեց իւր աւետարանը յունարէն լեզուով, ինքն աւետարանիչը լինելով բուռն երեւակայութեան տէր մարդ եւ Յիսուսի սիրելի աշակերտը, աստուածաբանական ոճով է սկսում իւր աւետարանը եւ գեղեցիկ կերպով նկարագրումէ Յիսուսի դրութիւնն ու խօսքերը՝ նորա տագնապալից մտածութիւնից սկսած։

Ա.ին զարմանալի համաձայնութիւնը որ չորս աւետարանիչների գրուածոց մէջ երեւումէ Յիսուսի կեանքի եւ քարոզութեան պատմութեան նկատմամբ՝ համոզումն է մարդուն, հաւատալ թէ բոլոր գրածները ճիշտ են, եւ պէտք է զարմանալ առաքեալների այն կենդանի սիրոյ վերայ դէպի իւրեանց վարդապետը, որ նորա ամեն մի արարքն ու գործը տարիներով անմոռանալի են պահել իրանց մտքում։

Աստուածաշնչի այն մասը որ վերաբերումէ Յիսուսի երկրաւոր կեանքին եւ նորանից յետոյ է գրուած կոչումէ Նոր Կտակա-

բան, որ բա ժանելումէ ըստ այսմ. Ա. Աւետարան որ պատմումէ Յիսուսի կեանքն ու քարոզութիւնը՝ եւ վերջանումէ Յիսուսի երկինք համբառնալով: Բ. Գործք Առաքելոց, որ նկարագրումէ առաքեալների կեանքը՝ նոցա քարոզութեան ժամանակ. այլեւ առաջին հաւատացեալների ընկերական յարաբերութիւնները: Գ. Պօղոսի Թղթերը, որոնք գրուած են զանազան քաղաքացիների վերայ, նոցա՝ իրանց քրիստոնէական պարտքը յիշեցնելու համար: Դ. Կաթուղիկէայց Թուղթք, որ ընդհանրական գրուածքներ են, հաւատացեալներին իրանց հաւատոյ մէջ հաստատելու համար: Կաթուղիկէայց Թղթերի հեղինակներն են առաքեալքն Յակովբ, Պետրոս՝ որ երկու Թուղթ ունի, Յովհաննէս՝ որ երեք Թուղթ ունի, Յուդա՝ որ մի Թուղթ ունի. Կաթուղիկէայց Թղթերի շարքում կարելի է դասել նաեւ Յովհաննու Յայտնութիւնը՝ որ մարգարէական մի գրուածք է եւ ապագայի գուշակութիւն:

Հին Կտակարանի մէջ կան այնպիսի գրքեր՝ որ երկրորդական են համարւում եւ եկեղեցւոյ մէջ չեն կարդացւում, որպիսի են Հռութ, Եսթեր, Եզրաս եւլն: Իսկ Նոր կտակարանի մէջ երկրորդական համարւում է Յովհաննու Հանգիստը: Կան այնպիսի գրուածքներ էլ, որ թէեւ Յիսուսի աշակերտներին են համարւում, բայց Աստուածաշունչի մէջ չեն մտած. օրինակ «Ա. Աւետարան մանկութեան Յիսուսի» եւլն:

Քրիստոնէական եկեղեցին ընդունել է Հին եւ Նոր Կտակարանը: Երբոր Հայերը ընդունեցին քրիստոնէութիւն, Աստուածաշնչի ընթերցանութիւնը կատարում էին յունարէնով եւ ասորերէնով. մինչեւ որ Ս. Սահակ եւ Մեսրոպ սկսեցին հայկական թարգմանութիւնը: Առաջին թարգմանուած գիրքը «Առակաց» է: Ս. գրոց թարգմանութիւնը երկու անգամ կատարուեց, աւելի ըզգուշութեան համար. առաջին թարգմանութիւնից միայն մի քանի կտորներ կան ժամագրքի մէջ. իսկ այժմեան ամբողջ մեր Աստուածաշունչը երկրորդ անգամի թարգմանութիւնն է եւ համարւում է ընտրելագոյն թարգմանութիւն եւ թագուհի ամենայն թարգմանութեանց կոչուած է հայագէտ եւրոպացիներից: Դնենք մի երկու կտոր առաջին եւ երկրորդ թարգմանութիւններից՝ համեմատութեան համար.

Ա. ՆԵՐՔԱՀԱՆՈՒԹԻՒՆ.

Այց արար իվերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետև երանի ցեն ինձ ամենայն ազգք։

Ցարոյց մեզ զեղջիւր փրկութեան ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ։

Առնել զողորմութիւն առ հարսն մեր և յիշել զկտակարանն սրբութեան իւրոյ։

Վասն գթոյ ողորմութեան Տեառն Աստուծոյ մերոյ. որով երևեցաւ մեզ արեգակն ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր, Ծագել ղլոյս ի վերայ այնոցիկ, որք նստեաք ի խաւարի և ի ստուերս մահու. ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան։

Բ. ՆԵՐՔԱՀԱՆՈՒԹԻՒՆ.

Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ, զի ահա յայսմհետէ երանի ասացեն ինձ ամենայն ազգք։

Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ։

Առնել ողորմութիւն ընդ հարս մեր և յիշել զուխտն իւր սուրբ։

Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արար մեզ արեգակն ի բարձանց. երևել որոց ի խաւարի և ի ստուերս մահու նստէին. ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան։

Յիսուս համբարձման ժամանակ պատուիրել էր իւր առաքեալներին երուսաղէմմէ չմեկնիլ. եւ երբ որ Պենտեկոստէի կիւրակէ օրը առաքեալները հաւաքուած էին վերնատան մէջ, առաւօտեան երրորդ ժամին լսած Հոգին Սուրբ. եւ առաքեալները զօրութիւն ստացած՝ սկսան քարոզել. առաջին անգամ Պետրոս առաքեալը խօսեց։ Յիսուս իւր առաքեալներին պատուիրել էր հաւատացեալներին մկրտել «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»։ Ուրեմն այս էր առաքելոց հանգանակն. իսկ խորհրդական արարողութիւններն էին Ա. ապաշխարեին, Բ. մկրտիլն։

Երբ որ հաւատացեալները գեռ սակաւ էին, ամենայն բան հասարակաց էր. առաքեալներն էին ողորմութիւն մատակարարում, որ երբ սաստկութեան առիթ տուեց, տասներկու առաքեալները ժողովելով՝ աշակերտներից եօթն հոգի ընտրեցին այդ պաշտօնի համար, որոնք կոչուեցին Սարկաւագներ. (Գործ. Զ.) Առաքեալները սկզբում միայն հրէաներին էին քարոզում, ինչպէս Յիսուս պատուիրել էր. յետոյ Ս. Հոգւոյ ազդեցութեամբ սկսեցին հեթանոսներին էլ քարոզել. հրէայ հաւատացեալները

թլփատութիւն ունենալով, գարշումէին անթլփատ հեթանոսներից, բայց առաքեալները առ ոչինչ համարելով թլփատութիւնն ու անթլփատութիւնը՝ սկսեցին քարոզել Աստուծոյ խօսքը ամենայն տեղ եւ առաջին անգամ Անտիոք քաղաքում հաւատացեալները Բառնաբասի եւ Պօղոսի հետ քրիստոնեայ կոչուեցին. (Գործ. ԺԱ. 26:) Թլփատութեան խնդիրը երբոր ծանրացաւ, առաջին համագումար ժողով կայացաւ երուսաղէմում ի ներկայութեան առաքելոց եւ երէցների ու վճռուեց թլփատութեան խորհուրդն առ ոչինչ համարել քրիստոնէութիւնը հեթանոսների մէջ տարածելու համար: Այլեւ որոշեցին՝ որ հեթանոսութիւնից դարձած քրիստոնեայքը զգոյշ լինին զոհելուց, արիւններից ու սրտնկուածից: Նորահաւատ քրիստոնեաները Յիսուսի պատուէրը կատարելու եւ նորան յիշելու համար ժողովւում էին, եւ նա՝ որ առաքելութեան պատիւ ունէր կամ երէց էր, պատմելով ու քարոզելով Յիսուսի կեանքը՝ կատարում էր խորհրդական ընթրիքի յիշատակը՝ բեկանելով հացը (Ա. Կորն. Ժ. — ԺԱ.), որ շատ զգուշաբար պէտք է կատարուէր: Ազօթելու համար այր մարդիկ գլխաբաց, իսկ կին մարդիկ ծածկած գլխով պէտք էին կանգնէին (Ա. Կորն. ԺԱ. 4—16):

Առաքելոց ժամանակով եկեղեցին կատարում էր հետեւեալ խորհուրդները.

Ա. Ապաշխարութիւն. Բ. Մկրտութիւն. Գ. Դրոշմ. (Գործ. Ը. 14—17: Դ. Հաղորդութիւն՝ հրապարակական ազօթքով, բեկմամբ հացին. Ե Ձեռնադրութիւն, որով կարգում էին առաքեալները երէցներ՝ Քրիստոսի խօսքը քարոզելու եւլն. Զ. Ամուսնութիւն, որ հաստատեց Աստուած եւ նուիրագործեց Յիսուսի վարդապետութիւնը ասելով, «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ». Է. Օծումն հիւանդաց, ինչպէս պատուիրում է Յակոբ առաքեալը:

Առաքելոց ժամանակով եկեղեցին ունէր հետեւեալ կազմակերպութիւնը ըստ վարչական մասին.

Ա. Առաքեալք. որոնցից ամեն մինը իրանց քարոզութեամբ քրիստոնեայ դարձած հաւատացեալների եկեղեցւոյ ներկայացուցիչն էին.

Բ. Եպիսկոպոսներ — որոնք առաքեալներից կարգուած էին հսկել իրանց յանձնուած հաւատացեալների վերայ.

Գ. Երէցներ — որոնք պէտք է Քրիստոսի խօսքը քարոզէին եւ Ս. խորհուրդները մատակարարէին հաւատացեալներին.

Դ. Սարկաւագներ, որոնք պէտք է սպասաւորէին երէցներին, Ս. Խորհուրդները մատակարարելու ժամանակ:

Առաքելոց ժամանակով երեւսպէմում գումարած առաջին ժողովի Ա. որոշումն էր թլփատութեան համար գայթակղութեան տեղի չըտալ, այսինքն՝ հեթանոսներին բռնի չըթլփատել. իսկ թլփատեալ հրէաներին չմերժել. որով թլփատութեան խորհուրդը կորցրեց իւր նշանակութիւնը. Բ. որոշումն էր զգուշանալ զոհեայները ուտելուց եւ առհասարակ հեթանոսական ինչ ինչ անտեղի սովորութիւններից:

Յուսիկ Վարդապետ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՐՏԱՐՈՒԹԵԱՆ, ԱՐՀԵՍՏԻ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ։

(Շարունակութիւն. տես նե. պետքերի ամսագրում).

1300. Գլավիս Դիօյեան, Ալմաֆիացի ծովագնացը, հնարումէ նաւային կողմնացոյցը. Այս պարզ գործիքի գործածութիւնով ծովագնացութիւնը նոր քայլ է անում դէպի յառաջ, վասն զի դորանով ծովային ընդարձակ ճանապարհորդութիւններ սկսուեցին և հետևանքն եղաւ համաշխարհային վաճառականութեան լիակատար կերպարանափոխութիւնը։

1300. Հօլանդիայում և Գլանդրիայում ապխտումն Հէրինգը սակայն հաւանական է որ ձուկն աղելու հմտութիւնը վաղածանօթ լինէր։

1300. Այդ ժամանակներում էր որ Իտալիայում մի քանի զանգակատների վրայ անիւաւոր ժամացոյցներ դրին, որոնք զարնում էին ժամերը։ Բանաստեղծ Դանտէն էլ առաջին անգամ յիշում է այդ մասին։

1300. Գիտնական Արնօլդ Բաքսօնկ—ֆօն Վիլլանովայ Կատալօնիայում համարվում է օդի ի գտնողը։

1300. Նիւրնբերգիայի ապրանքը հետզհետէ հռչակ է ստանում և աշխարհիս ամեն կողմերում տարածվում։

1319· Այս ժամանակներում արդէն գործածութեան մէջ էր քաթանի ցնցոտիներից շինած թուղթը։

1320· Վառօդը Գերմանիայում արդէն ծանօթ էր։ Այդ գիւտը վերագրուելն սովորաբար Գրայբուրգցի Բերթոլդ Շվարց աբեղային։

1322· Ազսբուրգն ձեռք բերեց առաջնաւոր աղօրիքը (մլաղացը)։

1331· Սպանիայի Ալիկանտէ ամրոցի պաշարման ժամանակ Արաբները հնարեցին քարընկէց մեքենան, որով ահագին քարէ գընդակներ էին ձգում թշնամու բանակի մէջ։

1350· Մետաղեայ թել կամ լար քաշելու արհեստը յայտնի է լինում Նիւրնբերգում և Ազսբուրգում։

1351· Առաջին ծանօթ դերձակների դասակարգն համարվում է Լայպցիկինը, որա նմանը գոյութիւն է ստանում 1371 ին Ցիւրիխ 1345 ին Ուլմ· 1405 ին Միւնխէն, 1470 ին Բէրն, և այլն։ Մի քանի դասակարգեր մնում են մինչև 18 րդ դարն էլ· ինչպէս Ս· Գալում 1727· Վիեննայում 1786 ին։

1375· Ցովհաննէս Արաւուեցին (Ազսբուրգում), ընձեռում է առաջին ձուլածոյ սնամէջ թնդանօթը։

1440· Ցովհաննէս Գուտէնբերգը հնարում է տպագրութեան արհեստը Մայնց քաղաքում և մտաւոր զարգացման մէջ նոր դարագլուխ է մուծանում։

1440· Փոխատու ընկերական տներ Իտալիայում, դորանից յետոյ՝ Ֆլանդերում, Բրաբանտում, Նիւրնբերգում և Ազսբուրգում։

1440· Պղնձի վրա փորագրելու արհեստը ըստ ոմանց հնարեց մի Գերմանացի, ըստ այլոց՝ 20 տարի յետոյ՝ մի Ֆլորէնտինացի։

1450· Առաջին անգամ շաքար եփելը և զտելը լինում է Բարսելոնիայում և Վենետկում։

1456· Բրիւգէում Լուիս Բերգուէնը հնարում է բրիլեանտի ողորկելը իւր փոշիով։

1470· Առաջին մետաքսագործութիւնը լինում է Ցոյն և Իտալացի մետաքսագործների ձեռքով Ֆրանսայի Տուրս քաղաքում· իսկոյն դորանից յետոյ՝ Ավինիոնում և Նիմէսում· իսկ Լիոնում և Ս· Էտիէնում՝ 16 րդ դարում։

1484· Վենետիկցիները արևելեան վարակիչ հիւանդութիւնների առաջը առնելու համար սահմանում են արգելարանը (քարանտինը)։

1486· Պօրտուգալցի Դիացը գտնում է Բարեյուսոյի հրուանդանը։

1492· Սպանիայից արտաքսում են արաբացիներին· այս արտաքսումն վնասարար է լինում Սպանիայի մէջ գիտութեան, արհեստի և վաճառականութեան զարգանալուն։

1492 Քրիստոֆոր Կոլումբոսը գտնում է Ամերիկան՝ երբ դէպ արևմուտք գնալով աշխատում էր Հնդկաստանը գտնել։ Նա տասը չարաթ նա-

ւելուց զկնի 11 Հոկտեմբերի իջնուէք Գուանահանիում (Ս. Սալվադոր), որ Բահամայ կղզիներից մինն է, մօտ Անտիլիան կղզիներին՝ որ կոչուեցին Արեւմտեան—Հնդկաստան։ Կօլումբոսը հիմնուէք այդ նոր երկրում Ս. Դօմինգօ քաղաքը՝ Հայիտի կղզու վերայ։

1497· Անգղիացի նաւորդութեան հրամանատար Կաբօտը գտնուէք Հիւսիսային Ամերիկայի ցամաքը։

1498· Պօրտուգալցի Վասկօ դէ Գաման Բարեյուսոյ հրուանդանի մօտից նաւելով գտնուէք Արեւելեան Հնդկաստանի ծովային ճանապարհը։

1500· Համաշխարհային տուր և առի ընթացքը փոխուելու և նոր ճանապարհների բացման պատճառով՝ Եգիպտոսի, Արաբիայի և Հընդկաստանի միջև եղած վաճառականութիւնը ընկնուէք, որով և բարձրանուէք Լիսաբօն, Սեվիլլա, Անտվերպէն, Ամստերդամ և Լօնդօն քաղաքների վաճառականութիւնը։

1500· Փուգիրեանք, ընիկ Շվեդացի ոստայնանկներ Աւգսբուրգում հարստանում գառնում, են իրանց ժամանակի Ռոչիլդները։

1500· Կրկնակի Տօմարակալութիւնը գործէ դրվում Իտալիայում։ Ասում են որ Ղուկաս Պակիօլլի անունով մի աբեղայ է հնարում այդ արհեստը Վենետիկում 1494-ին։

1500· Նիւրնբերգցի Պետրոս Ցեկիոսը Նիւրնբերգում հնարուէք ծոցի ժամացոյցը, որի մէջ՝ յետին ժամանակներում աւելացան զսպանակի լարը, խըխունջը և այլն; որով և կատարելագործուեց։

1519· Համատարած երկրագնտի շուրջ նաւարկութիւն է անում Ֆերնանդօ Մագելհան, որ մի Սպանական պաշտօնավար էր։ Այս բոլորաշուրջ նաւարկութիւնով գտնուէք մի երկրորդ ճանապարհ դէպի Արեւելեան Հնդկաստան՝ Ամերիկայի Հարաւային ծայրին մօտ։

1520· Սպանիացիք առաջին անգամ բերուէն շոգոլատը Մէքսիկայից Եւրոպա։

1520· Մարսելացիք գտնուէն Կորալեան խորշերը Բերբերիայի ծոցում, որ ամենագեղեցիկ արիւնագոյն կորալիօնն (բուստ, մարջան) է ընձեռում։

1530· Բրաունշվայգի Վատնմիւսըլ քաղաքում Իւրգէնսը հնարում է մանիչ անիւը (ջահրան կամ ճախարակը)։

1538· Տայեոյի վրայ, Կարլոս V· Կայսեր առջև երկու յոյն առաջին փորձն են անում Սուղակով (ընկղմիչ զանգով) ջրի տակը մըտնելու։

1540· Առաջին անգամ Վալերիուս Կորդուս Գերմանացի բժիշկը նկարագրուէ եթերի (ծծմբաեթերի) յատկութիւնը։

1543· Սպանացի Բլասկօ դը Գարէյ Բարցելօնայի նաւահանգստում մի նաւի երկու կողմերում թիակաւոր անիւներ սարքելով՝ փորձեր է անում՝ թէ այդ դէպքում գոլորշի էլ դործ դրաւ, յայտնի չէ։

1546· Հիավարուքթիւնը սովորութիւն է դառնում։

1559· Կալիմբրայում հնարուէք Պետրոս Նոնիուսը մի գործիք, որով չափուէր անկեան ամենափոքրիկ մասը։ Բայց Ֆրանչ Կօմտէացի Պետրոս Վերնիերը կատարելագործուէք այդ գործին 1651-ին. այդ պատճառաւ գործիքը Նոնիուս կոչուելու տեղ, երբեմնապէս Վերնիեր է լէ ասվում։

1550· Առաջին գործածած կամ հիւսուած գուլպան (զանկապան) Ֆրանսիայում և յետոյ շուտով Անգղիայում։

1550· Առաջին սրճարանի բացուէն Եւրոպայի մէջ՝ Կոստանդնուպօլսում։

1558· Այս ժամանակներում պէտք է գործածութեան մէջ մտած լինի դրամահատութեան ճնշարանը Ֆրանսիայում։

1558—1603· Եղիսաբէթ թագուհու օրով Անգղիան սկսուէք ծաղկել։ Նաւորդութեան և վաճառականութեան եռանդն արթնանուէք։ Դրակէի նաւարկութիւնը աշխարհի շուրջը։ Հիւսիսային Ամերիկայում հիմնվումեն գաղթականութիւններ. սկսվումեն Արևելեան Հնդկաստանի առևտրական ընկերութիւնը, ծովային վաճառականութեան ապահովող ընկերութիւններն և այլն։ Ապահովող ընկերութիւնները արդէն առաջին անգամ Պորտուգալում են հիմնվում 1350-ին, յետոյ Բարցելօնեայում և Իտալական միւս վաճառական քաղաքներում։

1560· Պօրտուգալում Ֆրանսիայի դեսպան Նիկօտը ծխախոտի գործածութիւնը Պօրտուգալից մտցնուէք Եւրոպա։

1560· Նէապօլցի Ցովհաննէս Բաբտիստա Պօրտան հնարուէք լուսանբկարի խաւար—սենեակը. այս գիւտով, մի խաւար տարածութեան մէջ մի ապակեայ ոսպի միջից անցնելով նիշը՝ ստացվուէք հեռաւոր առարկայի փոքրիկ պատկերը։

1562· Առաջին յայտնի լը ա գ իր ը Եւրոպայում նախ հրատարակվում է Վենետիկում. յետոյ 1588 Անգղիայում, 1615 Գերմանիայում (Ֆրանկֆուրտի օրագիրը)։

1563· Սպանիացիների ձեռքով բացվուէք Հարաւային Պերուի ՝ն դ իկ հ հարուստ բովն։

1567—1573· Սպանական Նիդերլանդի քաղաքապետ Հերցօգ Ալբան խանգարում, կործանուէք վաճառականութիւնը, արհեստի չանքը և բարեկեցութիւնը Անտվերպում, Բրուսելում, բոլոր Բրաբանտում և Ֆլանդրում, դորանից առաջանուէք հզօր շարժումնք դէպ Ամստերդամ, Անգղիա և այլն. ուր գաղթողները հիմնուէն ա-ժենաճեռնտու ճիւղերը ճարտարութեան։

1570· Առաջին անգամ մուտք է գործում Եւրոպա Լեզակը և Որդան կարմիրը։

1571· Լայպցիգի և Ֆրանկֆուրտի մէջ եղած ճանապարհի վրայ սահմանուելին կառքեր, որ կոչուելին անցուդարձող սայլակները, և գործ են ածուում իբրև առաջին փոստայինկառքեր։

1574· Մաթեմատիկոս Դասիպոդիուսը Հռոմսբուրգի մայր եկեղեցու ժամացոյցի յատակագիծը քաշուելէ և Հաբրեխտեան երեք եղբայրները կառուցանուելին ըստ յատակագծին։

1576· Ցովհաննէս Պրէտորիուսը, որ ուսուցչապետ էր Նիւրնբերգիայի մօտի Ալտորֆուում, հնարուելէ չափման սեղանը (երկրաչափական գործիք)։

1577—1580)· Ֆրանց Դրակէ անուելէ երկրորդ համաշխարհաշուրջ նաւարկութիւնը, և 1586 Ամերիկայից բերուելէ Եւրոպա կարտօֆիլը (գետնախնձոր, պատատէս)։

1589· Կամբրիզիցի Վիլլիամ Լեէն հնարուելէ գուլբա գործելու մեքենան (զանկապանի չարխը)։ Որովհետև հնարիչը հալածուելէ Անգլիայում, գնուելէ Ֆրանսիա, ուր նախարար Սիւլլի պաշտպանութեան տակ մի ահագին գործ է սկսում Ռուէնում։

1590· Ցոհանիդէսը, որ Ջէյլանդի Միդդելբուրգում ապակի թրաշող էր, հնարուելէ առաջին հեռադիտակը և առաջին խոշորացոյցը։ Հեռադիտակ խողովակի գիւտը վերագրուելին նոյնպէս ակնոցագործ Հանս Լիպպերշէյին որ էր 1608 ին Միդդելբուրգում, և Գալիլէին՝ շուրջ 1609 ին։

1600· Հոլանդացիք, Անգլիացիք, Ֆրանսիացիք և Դանեմարգացիք աւելի ու աւելի մասնակից են լինում ծովային գործառնութեան, որով և՝ ճարտարութիւնը և՝ ծովագնացութիւնը այդ երկրներում արագ զարգացումն է ստանում, որից հետևում է Եւրոպայի հարստութիւնն ու զօրութիւնը։ — Անկումն Հանզայի (դաշնակցութիւն) և վերջ նոցա տիրապետութեանը՝ հարևան երկրներում։

1600· Հիմնվում է Բրիտանա — Հնդկական ընկերութիւնը, որ է ամենայն վաճառական ընկերութիւններից հզօրագոյնը և հարստատգոյնը։

1600· Հէնրիկոս IV-ի օրով Ֆրանսիայում հիմնվում է շերամի որդ պահելու արհեստը։

1602· Գալիլէյը գտնում է ազատ անկման և ճոճանակի շարժման օրէնքը։ ապացուցում է որ նետուած իրի կորած ճանապարհը մի պարաբէլ է։

1609· Ցովհաննէս Կեպլեր յայտնի է անում իւր գտած օրէնքը, որով մոլորակների շարժումն է կատարվում։ Այդ օրէնքները կազմում են արդի աստղաբաշխութեան հիմունքը։

1610· Հոլլանդացիք բերուելին առաջին անգամ Չինական թէյը Եւրոպա։

1615· Ֆլամինգացի Յօղոմն գէ Կաուսը ջրաշոգիի զօրութիւնը չափելու փորձեր է անում։

1618· Երեսնամեայ պատերազմը Գերմանիայի վաճառականութեան և ճարտարութեան մեծ վնաս է պատճառում։

1619· Գրաֆ Դուլէյը Անգլիայում երկաթը քարածուխի հետ հալելու գիւտն է անում. բայց ամբոխի տգիտութիւնը և չարամտութիւնը խանգարումն իւր ձեռնարկութիւնը։

1620· Հոլլանդացի պատերազմական մի նաւի վերայ Ափրիկէից տարվումն Վիրգինիա առաջին 20 սեւամորթ գերիները։

1620· Անգլիացի Բակօն Փօն Վերուլամը իւր մի հռչակաւոր գրքում բացայայտումէ գիտութեան հիմունքի դիտողութիւնները։ Այն օրից անցաւ շատ ժամանակ, մինչև որ բնական գիտութիւնների հետազօտութեան աշխարհում նորա սկզբունքը տեղի գտաւ։

1630· Հոլլանդացի մի գեղջուկ, Կօրնէլիուս Դրէբբէլը հնարումէ Ջերմաչափը. թէև այդու չէր յայտնվում կատարեալապէս բարեխառնութիւնը։

1633· Հռովմում՝ Հաւատաքննութեան Ատեանը կանչելով Գալիլէյին ստիպումէ որ ժխտի իւր գտած այն մեծ վարդապետութիւնը թէ՝ երկիրս է շրջում Արեգական շուրջը։

1642· Ֆրանսիացի ներկարար Գօբլէնը հիմնումէ Պարիզում Գօբէլինեան գործարանը, ուր գործվումն Գօբէլինս ասուած հրաշագեղ գորգերը։

1643· Տօրիչէլին չափումէ օդի ճնշման ծանրութիւնը մի սնդիկի սիւնակով և դորանով գըտնումէ ծանրաչափը։

1650· Պերուից բերումն Եւրոպա Քինայի կեղևը. իսկ Կակաօյի հունդը՝ Կոլումբիայից։

1650· Օտտօ Փօն Գուերիկէն, որ Մագդեբուրգի քաղաքապետն էր հնարումէ Օդահանը։

1651· Կրոմվէլը վերջ է դնում Հոլանդացւոց ունեցած ծովային յարաբերութեան Անգլիայի հետ. և վերջինիս ծովային ուժը այնպէս է զօրացնում որ Հոլանդացիք ստիպվումեն համաշխարհային առևտուրը կիսել Անգլիացիների հետ։

1655· Ամենից առաջ Անգլիայում Մարքիզ Փօն Վորկեստըր հնարումէ շոգեմեքենան։

1656· Հուիգենսը ճոճանակը սարքում է ժամացոյցի վրայ և դորանով դառնումէ հնարիչ ճօճանակաւոր ժամացոյցի։

1658· Նյուտոնը գտնումէ այն զօրութիւնը, որ ունենումեն մարմինները, երբ պտտվումեն մի և նոյն շրջանակի մէջ, այն է՝ կենդրոնախոյս զօրութիւն։

1664· Դոկտոր Կլէյտէնը դիտումէ որ տաքութիւնով քայքայած քարածուխից գոյանումէ մի լուսատու այրող գազ։

1665· Հերքուրգի մօտ՝ Տուրսլա Վիլլում շինումեն առաջին գործարանը հայելիի, որը շինուժեն շերտաւոր (թրաշած) ապակիից։

1666· Անգլիացի մեծ գիտնական Իսահակ Նեւտօնը գտնում է ծանրութեան զօրութեան ընդհանուր օրէնքը։ բացայայտում է որ մակընթացութիւնը և տեղատուութիւնը արդիւնք է Լուսնի, Արեգական և երկրի միացեալ ձգողութեանց։ Հիմնումէ լոյսի նիւթական վարդապետութիւնը և այլն։

1668· Գաղղիացի Մարիօտէն և Անգլիացի Բօյիլէ մի և նոյն ժամանակում գտնումեն «Մարիօտեան Օրէնքը»։ այն է թէ՝ գազի տարածութեան ծաւալը փոքրանումէ այնքան, որքան որ մեծանումէ միասին ճնշող զօրութիւնը։ Սոյն համեմատութեամբ մեծանումէ և գազի խտութիւնը։

1670· Մօրլանդը հնարումէ խօսակցական խողովակը։

1670· Ծխախոտի առևտուրը գտնումէ բացառապես պետական մենաշնորհ Աւստրիայում և 1674-ից յետոյ նաև Գրանսիայում։

1672· Փօն Հայդէնը հնարումէ ջրմուղ կաշուէ խողովակը։

1672· Օտտօ Փօն Գուերիկէն հնարումէ եղկտրացուցիչ մեքենան։

1676· Բարլօֆ Անգլիացին շինումէ առաջին կրկնիչ ժամացոյցը։

1678· Անգլիան՝ իւր սեփական ճարտարութիւնը բարձրացնելու համար, արգելումէ Գրանսիական գործարանակերտը, զոր օրինակ, մետաքսի, ատուի, վուշի, ապակիի և ուրիշ ճարտարակերտածի արդիւնքները։

1680· Վիլհամ Պենը անգլիայում հալածուած Քուակերների գլուխն անցած, գաղթեցնումէ Պենսիլվանիա։ Այս գաղթականութեան շնորհիւ Հիւսիսային Ամերիկայի արագ ծաղկման հիմն է դրվում։

1681· Պապինը հնարումէ «Պապինեան ըղուղը»։ Մինչդեռ ջուրը օդի մէջ միայն մինչև եռացման կետն է տաքացնվում, այդ ըղուղի մէջ սակայն կարելի է ըստ կամի բարձր աստիճանի տաքացնել։ Քայց որովհետև ըղուղի միջի շոգիի տարածութեան մէջ ընդարձակողական ուժն էլէ աճում, ուստի Պապինը ըղուղի վրայ աւելցրել է մի ապահովող ծորակ ևս։

1683· Սկիզբն Շվարց Վալդենցհոֆ ժամադործութեան արհեստի։

1685· Լիւդովիկոս ԺԴ. Նանտի Օրէնքն է հրատարակում, որով Հուգենոտները (բարեփոխեալ քողոքականք) Գրանսիայում ստանում են նոյն իրաւունքները, ինչ որ կաթոլիկներն ունէին։ Ընդհակառակն այդու սկսվումէ աւելի դօրեղ հալածանք բարեկարգեալների

դէմ։ Շատ հարուստ ժներ փախան դէպի Անգլիա, Հոլլանդիա, Դանեմարգ, Գերմանիա և Զուիցարիա, ուր լաւ ընդունելութիւն են գտնում և իրանց նոր հայրենիքին օգտակար են լինում իրանց հմնած արհեստանոցներով և ջանասիրութիւնով։

1686· Լ է յբնիցը յայտնումէ կենդանական զօրութեան մեքենական օրէնքը· այն է՝ գործադարձութիւնը, որը ժողովումէ շարժման մէջ գտնուած մարմնի մէջ։

1690· Պապին կազմակերպումէ շոգեշարժ մեքենայի գաղափարը և նորա գործածութիւնը հինուսմէ անիւների կիրառութեան վրայ, փոխանակ ղեկի և առագաստի։ Նա 1691-ին Կասելի մօտ Ֆուլդայի վրայ մի փորձ է անում շոգիով պատրաստած մի նաւով գնալու, սակայն չի յաջողում։

1698—1725· Պետրոս Մեծը, Ռուսիայի կայսրը, բարձրացնում է վաճառականութիւնը, նաւագնացութիւնը և ճարտարութեան եռանդն իւր երկրի մէջ։

1698· Անգլիացի գնդապետ Սաֆերի, հնարում է մի գործիք որով լեռնային բովերից ջուրը դուրս է հանում շոգիով։

1700· Փինևի ժամագործութեան գործարանների հիմնումն։

1700· Արևելեան Հնդկաստանից եկող մետաքսեայ և բամբակեայ անկուածների դէմ արգելք է դնում Անգլիան, յօգուտ ներքին ճարտարութեան։

1700· Հետզհետէական բարձրացումն գերմանական ճարտարութեան· քաթանի, բամբակի, բուրդի և մետաքսի գործուածները կատարելագործվումն Էլբերֆելդում Բրեմենում, Կրեֆելդում և այլն· քաթանը և թաւիշը Շլիզիում և Լաուզիցում, ապակեղէնը Բեօհմում, պողպատն ու երկաթը Շտայերի մէջ և այլն։

1705· Նևկոմէն Անգլիացին հնարում և շինուսմէ մի մթնոլորտային շոգեմեքենայ։ Այս մեքենան ունի մի գլան իւր մէջտեղ։ Շոգին հոսուսմէ գլանի մէջ և բարձրացնում մխոցը։ Այդ միջոցին թափվուսմէ պաղ ջուրը գլանի մէջ և խտացնում շոգին։ Դորանով բացվուսմէ մի դատարկ տարածութիւն, մխոցը ճնշուելով օդի ծանրութեան տակ վայր է իջնում և գրաւում իւր տակի դատարկ տարածութիւնը և այլն ըստ կարգին։

1705· Դրեզդէնում առաջին անգամ վաղոցները լուսաւորուսմէն լապտերներով։

1709· Ցոմ. Գրիդր. Բեօտիխեր Ճլայցեցին դեղերանոցի աշակերտ Բերլինում, յետոյ Ալբևիկոս, բացայայտուսմէ յաղճապակի պատրաստելու գաղտնիքը։ Նա հիմնուսմէ առաջին յաղճապակիի գործարանը Մայսցէնում 1710-ին։

1710· Փոստային հաղորդակցութիւն առաջինը Միացեալ—Նահանգներում՝ Նիւ—Իօրկումն է հիմնվում։

1711· Փլօրէնցի Մեծ Դուքսի պաշտօնեայ Բարտօլօ Խրիզոֆօլին հնարուեւ պաշնամուրը։

1733· Դուֆայի զանազանելով էլեկտրականութեան երկու տեսակները՝ ապակիից առաջացածին՝ կոչուեւ Ապակիի էլեկտրականութիւն, խէժից ծագածին՝ Խէժի էլեկտրականութիւն։ Ճետոյ Լիխտէնբերգը դոցա փոխարէն անուանուեւ դրական և ժխտական էլեկտրականութիւն։

1736· Մետաղեայ Ջերմաչափը գործադրութեան մէջ է մտնում։

1737· Ճովհաննէս Կայի հնարուեւ ոստայնանկութեան սեղանի վրայ մի ուրիշ գործիք ևս, որով գործելու համար մի ձեռքն է միայն բանում և աւելի արագ գործում։

1739· Ռէօմիւրը շինուեւ 80 մասնեայ ջերմաչափը և սընդիկ է լցնում մէջը, որի կիրառութիւնը Ֆրանսիայում և Գերմանիայում դառնուեւ սովորական։

(Շարունակելի)։ (թարգմ.) Ս. Բէկ-Նազարեանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՆՈՐԱ ԿՈԶՄԱՆԸ ՀԱՄԵՄԱՏ։

(Շարունակ. տես Աբաբա Սեպուհքեր ամսագրում)։

Ահա սորանում է կայանում կնոջ ամենաբարձր կոչումը։ Իւր մարդու մասին հոգատարութիւնը արդէն երկրորդական տեղն է բռնում։ Նախ մարդը ինքը պէտք է մտածէ իւր վերայ և հոգս քաշէ, իսկ կնոջ օգնականութիւնը ոչինչ մեծ նշանակութիւն չըպիտի ունենայ, Այդպէս էլ է և տնտեսական գործերում։ Մարդու գործն է բնականապէս արտաքին գործերը, իսկ ներքինները — կնոջ։ Բայց եթէ պատահում է սորա հակառակը, չէ կարելի նորան ընդունել որպէս ընդհանուր կանոն, թէպէտ և պատահում են առանձին, բոլորովին հասկանալի օրինակներ այսպիսի հակառակութիւնների։ Իսկ եթէ երբ և իցէ էլ նա դառնայ կանոն, առ հասարակ եթէ եղել են այսպիսի փորձեր կնոջ ազատութեան համար, ինչպէս մի քանի տեղ, ֆրանսիական քաղաքական յեղափոխութիւնից յետոյ, այդ բանին հասնել կարելի է, միայն վնասակար հետևանք կ'ունենայ ընտանեաց համար։ Ծանրախոհ մարդիկ, որոնք բաւականին աշխատել են խնդրիս համար, երբէք չեն մերժել այս հետևանքը։ Կնոջ ազատութիւնը, ընտանեաց անկումը ու երկպառակութիւնը, երեխայոց կրթութիւնը սկսած ամենափոքր հասակից — այս բոլորը միմեանցից կախումն ունին։ Շատ տաբօրինակ բան

է, որ ոմանք այս անկախութեան (émancipation) մասին ասում էին, թէ լոգիկապէս պէտք է հասկանալ ազատութիւն (liberté) բառի մեջով ու նշանակութեամբ։ Պէտք չէ մոռանալ, որ ինչքան ցանկալի ու սիրելի կըլինի կնոջ համար «ըստ հաճոյից» (volanté) վարուիլը, քան ազատութիւնը, այնքան էլ կորստական կըլինի այդ երեխայի համար։ Անհատական զարգացման բարձր ու վսեմ նշանակութիւնը, որի վերայ միայն հիմնուած է ինքնաճանաչութիւնը և պատասխանատուութիւնը, որի մէջ կենդրոնանում են անկախութեան, ազատութեան ու կարգի պատասխանատուութիւնը, բոլորովին կ'ոչնչանայ երեխայից կրթութեան ժամանակ։ Մարդկային ցեղի ողջ ապագան ենթարկուած կըլինէր վտանգի կնոջ ե ր ա զ ա կ ա ն անկախութեան իրագործման պատճառով։

Բայց ինձ կըհարցնեն, միթէ իգական սեռի բնական կոչումը կամ նշանակութիւնը կին կամ մայր լինելն է։ Ծայտնի բան է, ոչ։ Շատերը այդ սեռից ի բնէ չեն կարող լինել ոչ ամուսին, ոչ էլ մայր, եւ հաւատում եմ, որ ոչ ոք նոցա համար չի ասիլ թէ ստեղծուած են միայն ե ր ե ւ ո ւ թ իւ ն կ ո յ ս մ ն ա լ ու։ Մարդուս վիճակը դեռ չէ որոշում նորա նշանակութիւնը կամ կոչումը։ Դոյն օրինակ էլ. մայրերի կամ ամուսինների խնդիրը չէ կայանում նորանում, որ լինին մայրեր կամ ամուսիններ։ Կան կանայք, որոնք բնութիւնից ստացել են զանազան միջոցներ մարդուս երջանկութեան և բարօրութեան վրայ ազդելու համար, և ես երբէք չեմ կասկածիլ և ուրանալ, որ կինը ունի ընդունակութիւն, այդպիսի ընդհանրական խնդիրները լուծելու համար։ Թող նոցանից իւրաքանչիւրը խոստովանի, թէ ո՛րպիսի ընդունակութիւն ունին այդ կողմից ժամանակակից հասարակութեան հանգամանքներում մասամբ իւիք գոյութիւն ունի անձնական ազատութիւնը՝ թէպէտ և սահմանափակ կերպով. մասամբ նա պէտք է լինի որպէս բնական հետևանք զարգացման. սոյնպէս և իգական սեռը կարող է ուննալ իւր պատկանեալ ինքնուրոյնութիւնը և գործակից լինել հասարակաց խնդիրները վճռելուն, որով զբաղուած է մարդկային ազգը։

Բայց երբէք և ոչ ոք չունի իրաւունք պնդելու, որ կնոջ բ ն ա կ ա ն կոչումը նորանում է, որ նա ևս գործակից լինի արքունական կեանքի ասպարիզում և լինի անխոնջ աշխատակից նորա ժամանակակից հարցեր ու վէճեր վճռելուն։ Բնական նշանակութեան կամ կոչման համար պիտք է յարմարուել և բ ն ա կ ա ն կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ ե ա ն կ ա զ մ ո ւ ա ծ ք ի հետ. բայց մենք գիտենք որ կնոջ կազմուածքը առաւել նման է երեխայի, քան տղամարդու կազմուածքի։ Ուստի կնոջ բնական պարագմունքները առաւել հեշտ, թեթև ու հասարակ պիտի լինին. իսկ այդպիսիներին առաւել յարմար է պարապել տնտեսութեամբ, թէպէտ և վերջինս նորա սեպհականը չէր։ Իգական սեռը կարող է և մարդուն չէ պնալ կամ որդի չունենալ, կրկին նորա պարտքն է տան օջախի հոգա-

տարութիւնը և պահպանողութիւնը, նա կարող է աշխատել, վճռել այն մեծամեծ խնդիրները, որոնց համար չարչարւում է մարդկութիւնը. բայց նա կարող է փոխել իւր կանացի բնաւորութիւնը, եթէ նա հրաժարուի կատարել թէ տան և թէ ընտանեաց վերաբերեալ գործերը—նա կարող է մասնակից ու եռանդուն գործակից լինել հասարակական կեանքի կրօններում, տղամարդկանց երկպառակութիւններում. դարձեալ՝ ինչ որ էլ լինի, նա իւր տան վերայ պէտք է նայի որպէս հաշտութեան տեղի, որպէս սուրբ ապաստանարանի վերայ, ինչտեղ գոնէ պահպանւում են խաղաղ զգացմունքներ ապագայ սերնդի համար. Այս գեղեցիկ միտքը իւրեան առաջնորդ էր դրել Հռովմէական տէրութեան կրօնը, ուստի նա մեծ յարգանք ու պատիւ էր տալիս կոյս վեստալեաններին։

Այն ժամանակ այդպիսի յարդ ու պատիւ ստանալու համար հարկաւոր էր միայն անարատութիւն ու անմեղութիւն։ Ժամանակակից կինը չէ կարող բաւականանալ միայն դոցանով, և որքան մարդկային խելքը զարգանալով դրական ուղղութեամբ յառաջ գնայ, այնքան էլ կինը չէ կարող բաւականանալ այդ առանձնայատկութիւններով։ Կոչման պարտականութիւնը այնքան դժուարանում է, որքան զգալի է լինում նորա անհրաժեշտութիւնը, որ այդ բոլորը կատարուի գիտակցաբար։ Կնոջ կրթութիւնը և դաստիարակութիւնը այնքան կատարեալ պէտք է լինի, որքան մեծ յոյսեր են տածում նորա վերայ, թէ ժողովրդական զարգացման մէջ նա ունի մեծ ու գեղեցիկ ազդեցութիւն և՛ մանուկների, և՛ մարդկանց վրայ։

Բայց պէտք է ասած, որ միշտ, ամեն ժամանակ կնոջ դաստիարակութիւնը առաւել թերի է եղած։ Հին աշխարհը, թէպէտ նորա ուղղութիւնը ունէր որոշ բնաւորութիւն, դարձեալ չկարողացաւ բարւոքել կնոջ դրութիւնը։ Քրիստոնէութիւնը հասարակութեան մէջ ընդունելով կանանց՝ առաջին անգամ ցոյց տուեց, որ նոցա համար բացի ընտանեկան գործերից, կան և արտաքին աշխատութիւններ, որ քարոզում է քրիստոնէութիւնը, այն է՝ եղբայրական սէր, ուստի և հոգատարութիւն տնանկների, էքսաւորների, աղքատների և հիւանդների համար, որոնք ոչ թէ հասարակ աշխատութիւն են, այլ սրբազան պարտականութիւն։ Բայց նա չը տուեց կանանց իսկական դաստիարակութիւն ու կրթութիւն։ Միայն շատ յետոյ, երբ եկեղեցին ընդունեց քահանայապետական ձևերը, վանքական դպրոցները բացին իւրեանց դռները և՛ մատաղ օրիորդների համար. իսկ յետոյ՝ կազմուեցան և զանազան միաբանութիւններ (congregatio), որոնք սոիպում, պարտական էին համարում ուսում ստանալը։ Այս ուսումը առաւել կրօնական—վարդապետական ուղղութիւն ունէր. նորա քիչ ուշադրութիւն էին դարձնում գործնական—տնտեսական ուսման, առաւել քիչ—մտաւոր զարգացման վրայ։ Այս ուսման հետևանքը օգտակար էր ոչ թէ թագաւորութեան կամ ընտանեաց համար, այլ—եկեղեցու։

Միայն տասնուվեցերորդ դարուց,— գուցե այդ ուներ իւր պատճառը, որ եկեղեցին հերիտիկոսական էր համարում և առաջին անգամ նիգերլանդում—կազմուեցին, դպրութիւն ստացան կանանց ընկերութիւնները, որոնք սկզբում պարապած էին ողորմած ու գթասիրտ գործերով, բայց յետոյ իւրեանց ձեռը առան և կանանց կրթութիւնը։ Այդ ընկերութիւններից դուրս եկան անկախ գործիչներ, որոց թիւը շուտով մեծացաւ, որոց և համակրում էր ողջ Գերմանեան, բայց շուտով ենթարկուեցին և՛ եկեղեցու անէծքներին և՛ պապերի որոտընդոստ նզովքներին։ Միայն կրօնական յեղափոխութիւնը լաւ հիմք դրեց այս բանին, բացուեցին ուսումնարաններ բողոքական օրիորդների համար, և այնպիսի հարուած տուին, որ կաթոլիկական եկեղեցին սկսաւ որոնել իւրեան համահաւասարներին Ուրսուլեան միաբանութեան*) մէջ, անգլիացի քոյրերի և ուրիշ կրթութեան նպատակով կազմուած կանանց ընկերութիւնների մէջ։

Բայց որպէս բողոքականների, նոյնպէս և կաթոլիկների օրիորդաց ուսումնարանները գլխաւորապէս կրօնական ուղղութիւն ու բնաւորութիւն ունէին, և կնոջ կրթութիւնը հիմնուած էր միայն ընտանեկան կեանքի աւանդութիւնների վրայ։

Աւա՜ղ, դանդաղ և ուշ հասկացան մարդիկ, որ այդ համոզմունքը սխալ է և հերիք չէ։ Համարեա 200 տարի սորանից առաջ յարգելի Ֆէնելօնը գրել է հետևեալ խօսքերը։ «Կնոջ պէտք է ուսուցանել այն, ինչ որ նորա կենսական խնդիրն է կազմում։ Նա պէտք է հսկէ երեխայոց, տղայոց կրթութեան վրայ մինչև որոշ հասակի հասանելը, աղջկերանց վրայ—մինչև մարդու գնալը։ Նա պէտք է բոլոր անդամների գործերը, տնտեսութիւնը, ել ու մուտքը վերահսկէ, և այլն։ . . . Ահա՛ սորանում է կայանում նորա պարտականութիւնը, այս պէտք է սովորի նա»։ Բայց Ֆէնելօնը իւր ժամանակին առաւել շատ էր պահանջում, եթէ ի նկատի առնենք 18 կամ 19 դարերիս իգական սեռի ուսումնարանների վիճակը։ Ո՛չ բարձր, ո՛չ էլ ծխական իգական ուսումնարանները նպատակ ունին կրթել կեանքի համար։ Նորա զարգացնում են, ամենագովելի եռանդով, աշխատում են զարգացնել կնոջ խելքն ու միտքը արուեստների ու գիտութիւնների համար, նորա մատակարարում են նոցա գիտութիւններ, սովորեցնում են զանազան ձեռագործութիւններ, անգամ նորա լինում են ուսուցչուհիներ, բայց երբէք չեն լինում լաւ տան տիկնայք։

(*) Ուրսուլեան Միաբանութիւնը հիմնել է Ս. Ուրսուլան 1537 թ. Միաբանութեան նպատակն էր կրթել ու դաստիարակել օրիորդներին ձրիաբար։ Միաբանուհիք հետևում էին Օգոստեաննների ծրագրին, որ իրջինս նմանուցէ կոյսերի Միաբանութիւն է յանուն սրբուհւոյ Աստուածածնին, որ ճիւղաւորուած է Սալամիայում, Իտալիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Իւ Ամերիկայում։ Նոցա հագուստն է սեւ, ոչ ճոխ ու փարթամ։ Միաբանութիւնս հիմնուած է 1236 թ։

Թաե. Թարգմ.

Խօսելով առն տիկիններուն մասին, համաձայն վերոյիշեալներիս, ես չեմ կամենում ասել լաւ ամուսիններ ու մայրեր, այլ ընդհանրապէս— կանայք, որոնք կարողութիւն ունին գիտակցաբար լարել, ուղղել ընտանեկան կեանքը դէպի իւր ճիշտ ու սուրբ նպատակը, այսինքն· նոքա կարող լինին ինքնուրոյն կերպով զբաղուիլ որդւոց դաստիարակութեամբ հիւանդների վրայ հոգատարութեամբ, հսկողութեամբ խոհանոցի ու պարտիզի գործերի վերայ։ Ես բաց եմ թողում մի ուրիշ խընդիր «կնոջ կրթութիւնը մարդու համար», նոյնպէս չեմ կամենում խօսել և մի ուրիշ հարցի վրայ· «կնոջ կրթութիւնը հասարակութեան համար», Բաց եմ թողնում նորա համար, որովհետև, ինչպէս կարծում եմ, թէ նորա և թէ սորա համար հարկաւոր է, որ կինը նախապէս կրթուած ու պատրաստուած լինի ընտանեկան կեանքի համար։ Բայց հարց· ինչպէ՞ս ուսուցանել այդ։ Այդպիսի կրթութիւն, ասում են, չէ կարելի մտցնել ուսումնարանների ու պանսիօնների մէջ։ Ես համաձայն եմ, որ նոցա խնդիրը այդ չէ եղել, իսկ եթէ լինել կարող է, կըլինի միայն մասամբ։ Անկասկած՝ պէտք է խոստոհանել, որ այդ խընդիրը գոյութիւն ունի։ Փաստ է, որ շատ ու շատ մտաղ օրիորդների համար կըգայ ժամը, երբ նոքա պիտի նայեն որդւոց վերայ, հոգս պիտի քաշեն հիւանդների վերայ, պիտի մտածեն մանուանի, խոհանոցի, պարտիզի գործերի վերայ։ Մ՚թէ կարծում են, թէ այդ բոլորը ինքնանք կը կատարուին, և չկայ հարկաւորութիւն այդ բաները ուսանելու։ Արքա՞ն դաւնագին փորձեր պիտի անեն նոքա, որքան ծանր հոգսեր պիտի քաշեն նոքա։ Արքա՞ն երջանիկ կլինէր այն պսակը, հարսանիքը, եթէ աղջիկը, նախքան պսակուիլը, ուսումը աւարտած լինէր։ Արքա՞ն տիրուհիք առաւել յարգելի կը լինէին, եթէ նոցա, քանի դուռ օրիորդ էին, լաւ պատրաստէին մարդու գնալու համար։

Այդ բաներից շատը կարելի էր ուսանել միայն տեսականապէս, կամ, գոնէ, տեսական միջոցներով անել հրաժեշտ պատրաստութիւնները, և այդ անկասկած կարող է լինել իգական ուսումնարանների նպատակը։

Ասենք մի քանի խօսք էլ առողջապահութեան մասին։ Կարելի է լինել այն համոզման տէր, թէպէտ և կոպիտ և ոչ ժողովրդական անտի աւանդութիւնների պատճառով, թէ, ոչ ոք չէ ուզում մտածել մարդու առողջ կամ հիւանդ մարմնի վերայ։ Ուսուցանելով օրիորդներին բնական պատմութիւն, մասամբ իւիք այդ նախապաշարմունքը ցրվում է, բայց ամբողջապէս ոչինչ չէ ստեղծվում։ Ցայտնի բան է, որ անդամահատութիւնը (анатомія) և ֆիզիօլոգեան այնպիսի գիտութիւններ են, որոնց մասին սկզբում այն կարծիքն ունէին, թէ լաւ հասարակութիւնների մէջ այդ գիտութիւնները չէ կարելի մտցնել, անգամ պէտք է աշխատել մտաղահաս օրիորդներից ծածկել դոցա գոյութիւնը։ Բայց բնականը եթէ բոլորովին էլ մերկացնենք, վտանգաւոր չէ, փորձով ապացուցուած է, որ վնասակար է անտեղի ծածկելը, թագցնելը։ Բացի դո-

բանից խօսելը անգամ աւելորդ է, որ անդամահատութեան ու ֆիզիօլոգիայի ողջ կուրսը աւանդուի իգական սեռի ուսումնարաններում և, անկասկած, միշտ կարելի կըլինի բաւականանալ դորանով, վստահ լինելով որ երբէք և ոչ մի խելքի վերայ չի ունենալ վնասակար ներգործութիւն։

Որպէս զի բարեկարգ լինին խոհանոցին վերաբերեալ գործերը լաւ ընտանիքում, պէտք է փոքր ի շատէ հասկացողութիւն ունենալ դիւրամարս և դժուարամարս կերակուրների վրայ։ Կինը այդ փորձերով է սովորում մի քանի տարուայ ընթացքում։ Բայց այդ միջոցում ընտանեաց անդամներից մի քանիսները կարողանում են ստանալ փորացաւ։ Թէ ինչու համար է կերակուրը վնասել ստամոքսին — այդ չգիտէ տան տիկինը, և փորձերը կրկին շարունակվում են։ Թէ որքան քիչ է այդպիսի փորձառութիւն լաւ կերակուր պատրաստելու համար, կարելի է նշմարել նորանից, որ առօրեայ մեր կեանքում դիւրամարս կերակուրը այն է համարվում, որ չէ ծանրացնում ստամոքսը կամ մարմինը, մինչդեռ, Ճշմարիտն ասած, դիւրամարսը այն է, ինչ որ մարսվում է և լուծվում ու «արիւն դառնում»։ Դիւրամարսը կարող է լինել երբեմն և վնասակար, իսկ դժուարամարսը միայն աւելորդ։ Որքան յաճախ են սխալվում կերակուրների ընտրութեան մէջ, որքան քիչ են այդպիսի երիտասարդ մայրեր, որոնք այդպիսի դիպուածներում չեն սխալվում։ Եւ որքան կերակուր են տալիս մեզ, որոնք երբէք մեր ստամոքսին չէին վնասիլ, եթէ պատրաստէին նոցա այնպէս, ինչպէս հարկն է։

Որպէս զի ունենան ամենահասարակ հասկացողութիւնը այս պարզ բաների վերայ, բաւական է միայն իմանալ, թէ ինչպէս է կազմուած ստամոքսը, ինչպէս է նա մարսում կերակուրներն ու խմիչքները, որպիսի կապ կայ խմիչքների և կերակուրների մէջ, ինչ են դառնում մարմնի մէջ կերակուրների զանազան մասները, ինչ օգուտ ունին և այլն։... Դորա համար պէտք չէ ունենալ հասկացողութիւն միայն անդամահատութեան և ֆիզիօլոգիայի մասին, այլ և քիմիայի, բուսաբանութեան և այլ մի քանի բաների վրայ։ Եւ այդ գիտութիւնները չպէտք աւանդուին հարևանցի կերպով, որովհետև գործ դնելու ժամանակ պէտք կըլինին զանազան բացատրութիւններ, մեկնութիւններ և աշխատանք, այլ պիտի աւանդուին դրականապէս, որ միշտ պատրաստ լինին և կարօտութիւն չունենան երկար մտաւոր աշխատանքի։

Նոյնը պէտք է ասել բնակարանը տաքացնելու կամ ցրտեցնելու, օդափոխութեան, վառելիքների, հանդերձեղէնների և անկողնի մասին։ Այս բոլոր հարցերը, նոցա գլխաւոր պրինցիպները, կարող է ուսանիլ տեսականապէս և ամենասուղ խելքը առանց որ և իցէ դժուարութեան։ Ամէն մի ուսումնարանում կարելի է ուսուցանել այս բանը չափահաս օրիորդներին։

Նոյնպէս պէտք է պատմած նոցա, գոնէ ամենահամառօտ կերպիւ մանուկ զարգացման, նա մանաւանդ երեխայոց հիմնական կանոնները։ Արդարև, մանկավարժութեան կանոններում կան պակասութիւններ, նոցա թիւը անգամ շատ է, քան դիէթիկականը կամ բժշկականը, և երիտասարդ մայրը կարող է առաւել համոզուած և հանգիստ նայել իւր առաջին զաւակի վերայ, եթէ միայն նա գիտէ, որ պէտք չէ ամեն մի փորձ, ինչ որ գլուխը կըգայ, անէ նորան կրթելու համար։ Չենք կարող չյիշել, որ ընտանեկան կրթութիւնը այժմ դեռ այնպիսի ստոր աստիճանի վերայ է կանգնած, որի վերայ էր անցեալ դարում ժողովրդական տնտեսութիւնը։ Ծանանակակից հարցերից մէկն էլ այն է, որ կազմենք կրթութեան կամ մանկավարժութեան դիտութիւնը, որ թոյլ չտար ամեն մի փորձն կատարել երեխայի վերայ և կրթել նոցա այն ձևով, որ այս կամ այն տեղ կըլսես։

Մի և նոյն ժամանակ ես չեմ պնդում, թէ այսպիսի կրթութեան գիտութիւնը (մանկավարժութիւնը), որ կաւանդուի իգական ուսումնարաններում միայն տեսականապէս, կարող է բաւականութիւն տալ կեանքի բոլոր պահանջներին։ Նոյնպէս և չեմ մոռանում, որ հանգամանքներին կամ դիպուածներին պէտք է թողնել, այսինքն՝ մինչև որ ծնուի փոքրիկ եղբայր կամ քոյրիկ, որ առիթ լինի մեծ քրոջը պարապուիլ կրթութեամբ գործականապէս։ Բայց անհրաժեշտ է, որ գործնական մանկավարժութիւնը լինի իգական սեռի կրթութեան անքակտելի ու անրաժանելի մասը։

Բազմաթիւ երիտասարդ օրիորդներ շատ հեշտութեամբ կարող են ուսանել այդ, եթէ միայն օգուտ քաղեն զանազան հիմնարկութիւններից։ Ինչտեղ այդպիսի փորձեր կան,—հիմնարկութիւններից, որոնք շատ հաճելի ու անսպասելի կերպով կարող են հիմնուել ընտանիքների մէջ։ Իսկ հասարակութիւնն ու ընկերութիւնները կարող են ամեն տեղ լինել այդպիսի հիմնարկութիւններ ու հաստատութիւններ։ Այդ հիմնարկութիւններն են՝ որբանոցներ, անկելանոցներ և այլն . . . Նոքա այնքան նշանակութիւն ունեն մատաղահաս օրիորդների համար, որքան ևս հիւանդանոցները և կլինիկան երիտասարդ բժիշկների համար։ Այսինքն՝ դոքա կըլինին այնպիսի հիմնարկութիւններ, ինչտեղ նոքա գործնականապէս կ'ուսումնասիրեն իւրեանց պաշտօնը գիտութիւն միջոցներով։ Ինչտեղ նոքա կ'ուսանին հսկել երախայի վերայ և բարձրացպէս, և ֆիզիկապէս։ Այդ նպատակի համար կարող են լինել և ուրիշ հիմնարկութիւններ, ինչպէս կրթութեան կամ խնամատարութեան տներ, ուրկանոցներ և այլն։ Բայց երեխայոց համար շինած ապաստանարանը ունի այն առաւելութիւնը, որ համարեա ամեն տեղ լինում է։

Բոլոր այդ հիմնարկութիւնները ունին միակողմանի ուղղութիւն և օգուտ, այն է· այնտեղ կրթելով երեխաները և նոցա ծնողները ստանում են օգուտ, իսկ աժենամեծ օգուտը — երբ մի քանիսները հսկումն և ձգտումն են ցոյց տալիս դէպի եկեղեցին· Նոցա հիմնելու ժամանակ բոլորովին ի նկատի չեն ունեցել, որ այդ հիմնարկութիւնները մի և նոյն ժամանակ կարող են լինել մատաղ օրիորդների համար գործնական առաքինութեան և խոհական ուսման պարտէզ, վարժարան՝ — տնտես կանանց համար, եթէ միայն այստեղ փորձառու ուսուցիչները կամ ուսուցչուհիները գործնականապէս աւանդեն նոցա կրթութեան ուսումը, այսպէս ձեռք բերելով գիտութիւնը՝ ձեռք բերէին և նորա գործադրութիւնը·

Փոքրիկ աղջկան, որ դեռ օրօրվում է օրօրոցում, դուք նախ և առաջ տալիս էք խաղալիքներ և տիկիններ, որոց հետ նա խաղում է մինչև մեծանալը· Ճետոյ դուք գնում էք մի փոքրիկ տնակ այդ տիկինի համար, գնում էք նոյնպէս և նորա պարագաները· Ինչ նպատակ ունի ձեր արածը· Այն նպատակը, որ խաղալով նա պատրաստուի իր ապագայ գործունէութեան համար համեմատ իր կոչման և կամենում էք արծարծել նորանում կնոջ զգացմունքը՝ երախտական տնակով սովորեցնելով նորան առարկաներին· Շատ բարի· Բայց այստեղ անուշադիր էք թողնում ուրիշ կողմը· Տիկինը նոքա մի անկիւնից միւսն են ձգում· Ողջ աշխարհը թափում է աղջկան, կարծես, Հագած լինի կեղծ հագուստ· Գրականօրէն և բնականապէս նա ծանօթանում է աշխարհիս հետ, երբ նա մարդու է գնում և մայր է դառնում· Հասկանո՞ւմ էք այժմ· Հէնց սորանում է կրթութեան այս մեծ սխալը, որ կարող է անել հասարակութիւնը· Հասկանո՞ւմ էք դուք այժմ, որ մեղք է հաւատալ և տալ կենդանի մանուկը այն մօրը — որի համար այժմ կայ մեծ կոչում — որ այդ բանի համար ոչընչով պատրաստ չէ եղել, բացի այն կրթութիւնից, որ յայտնի է նորան իր տիկնի տնակից· Նմանապէսդ այն մայրերին հաւատալ, որոնք ընկճած են հասարակութեան խառնիճաղանճ ազդեցութեամբ, պէս պէս զուարճութիւններով և տեսակ տեսակ տարակների յետևից են ընկած կամ նախապաշարուած՝ զանազան աւանդութիւնների են ենթարկուած·

Այս սխալանքից հեռու մնալու համար մի միջոց կայ, որ խաղալիք տնակից յետոյ պատրաստուին իգական ուսումնարանի համար, իսկ յետոյ վարժուին երեխայոց ապաստանարանում· Ինքը Ֆրէֆէլը նոր մտքի ու համոզմունքի էր, բայց նորան իրականացնել ժամանակին հարցերից մէկն է·

Գործ դնելը իր ուսումը կըփարատէ և մարդու չդնացած աղջկայ անբաւականութիւնը, բայց եթէ կնոջ անկախութեան կամ ազատութեան մասին յայտնած միտքը երկրորդական անգամ երբորդական չինեն, այն ժամանակ պէտք չէ մոռանալ, որ մարդու բաւականու-

թեան ամենալաւ եւ ամենայստակ աղբիւրը ոչ թէ վայելչութիւնն է, այլ կամաւոր, բարոյական սկզբունքների կամ պատճառների վրայ հիմնուած ստոյանիկ հրաժարութիւն է։ Այդ հրաժարականը, որ շաղկապուած է հայրենեաց և մարդկութեան համար աշխատանքի հետ, մի գոհ է, որ այնքան էլ աստուածահաճոյ է, այնքան էլ բաւականութիւն է տալիս մոքին, որքան եւս վանք մտնելը, ինչպէս ուխտում և անում էին յառաջ օրիորդները։ Այդպիսի գոհ անողները ստանում են կենսական կարևոր ինդրի ամենաքաղցր պարգևը· իւրեանց պարտքը կատարելապէս ճանաչելու համար։

Յա-Ելագրո-ղի-ն։

Բոլոր վերոյիշեալը հարևանցի նկարագրութիւն էր այն խորհրդածութիւնների, որ յանճախակի ծագել են գլխումս· որպէս մարդ և լրիիշկ ես միշտ մտածել եմ այդ բանների վերայ, շատ անգամ էլ խոր մտածողութեան մէջ ընկղմած եմ եղել՝ աշխատելով պարզել խնդիրս։ Բոցա աւելի շատ պէտք էր բացատրած և զարգացրած։ Այսպէս, ինչպէս ես ձեզ մեկնեցի այստեղ, դուք կարող էք շատ հակառակութիւններ գըտնել, որ և անհրաժեշտ են բացատրութեանց, բայց դորա համար ես չունիմ ժամանակ։ Բայց նոյնպէս չեմ դժուարանում ամփոփել այդ մոքերը հրատարակել մամուլի միջոցաւ,—այդ ինձ ստիպում է անել ոչ միայն շատ մարդկանց հաւանութիւնը, որոնք ճառս լսել են, այլև այն նկատողութիւնները, անգամ և շատ հեռի տեղերից համառօտ ծանուցումները, որ հրատարակել են ամսագրերը և գարձրել են խոհուն և փորձուած կանանց ուշադրութիւնը։ Բացի դորանից ինձ համար թանկ չէ, թէ ինչպէս կամ ինչ ձևով կ'իրագործուի այս միտքը, այլ միայն—որ իրագործուի նա, և ես համախոհ եմ այն մարդոց հետ, որոնք հաւատացած են, որ պէտք է պատուղ բերէ սա։ Երջանիկ է այն ընտանիքը, ինչտեղ կան կրթութեան բոլոր տարրները, և կարող է այդ սերնդից սերունդ անցնել ժառանգաբար։ Նա կարող է և առանց իմ խորհրդածութեանս «հօլայ գնալ», անգամ և մերժել նոցա։ Բայց անկասկած չէ կարելի նոյնը ասել ժամանակիս բազմաթիւ ընտանիքների մասին։ Եթէ կամենում էք, բոլոր հասարակութիւնները կազմուած լինին հիմնաւորապէս, դորա համար պէտք է որոնել նոր միջոցներ այդ ընտանիքները կրթելու համար։ Այս իմ բրօշիւրը թող լինի մի անզօր թոթովանք այդ աշխատութեան մէջ։

Ծ. Ե.

Մոսկուա։

ԱԶԳԱՅԻՆ

ԴԱՐՁԵԱԼ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՑ ՎԻՃԱԿ.

Ա.րարատի Յունիս ամսատետրակի մէջ «Ս. Երուսաղէմ եւ Եգիպտահայոց վիճակ» վերնագրով մի յօդուած տպեցինք, ուր ի նկատի ունենալով որ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը Վսեմ. Սաեփան փաշային կամենում է յանձնել Եգիպտահայոց վիճակի առաջնորդութիւնը, նախ անտեղի էինք համարել աշխարհական անձին այդ տեսակ պաշտօն յանձնելը. եւ մանաւանդ էինք եղել այն հանգամանքի վերայ՝ թէ ըստ Սահմանադրութեան՝ ինքն ժողովուրդը պէտք է ընտրէ իւր առաջնորդը. իսկ նշանակելը ուղղակի ժողովրդական իրաւանց բռնաբարութիւն է. թէեւ Սաեփան փաշա առաջնորդ չը նշանակուեց, սակայն լիազօր պատուիրակի կոչումն, որով նա պէտք է առաջնորդական ընտրութիւն կատարէր, ազգային գործերը կարգի դնէր եւ այլն, դարձեալ մեծ պարտաւորութիւն էին դնում յիշեալ փաշայի վերայ. Ահա մասին մեր ենթադրութիւնն էր Ա. յարգել ժողովրդեան իրաւունքը՝ թողնելով որ նա ինքն ընտրէ իւր առաջնորդը. եւ մինչեւ այդ ընտրութիւնը ի պահանջել հարկին՝ դարձեալ ինքն ժողովուրդը ընտրէր իւր միջից մի պատուիրակ՝ իւր ազգային գործերը կարգաւորելու. Բ. որովհետեւ Եգիպտոս Երուսաղէմայ վիճակն էր, եւ Երուսաղէմ այդ երկրում մեծամեծ կալուածներ ունէր, վասն որոյ դարձեալ յանձնել Երուսաղէմին, եւ Երուսաղէմայ եպիսկոպոսներից, ընդ իրաւասութեամբ Երուսաղէմայ Պատրիարքութեան մի առաջնորդ կարգել ընտրութեամբ ժողովրդեան:

Բայց այս, մեր այն յօդուածի երկրորդ կէտը վերաբերում էր Երուսաղէմի պարտքին, եւ այդ պարտքը վճարելու համար գործ դրուած միջոցին: Հետամուտ չենք կամենում լինել թէ ինչպէս գոյացաւ այդ պարտքը, վասն զի այդ մասին թող զմանր մունը հրատարակութիւնները եւ ականատես ու գործակից անձանց պատմութիւնները, հարկաւոր տեղեկութիւն ունինք երբեմն Երուսաղէմայ Թարգման ոմն Զիլինգիրեանի «Երկամեայ անցից պատմութիւն» վերնագրով գրքուկից, որ՝ որչափ եւ չափազանց օրէն, այնու ամենայնիւ պատկերացնում է իրանց վիճակը.

Հետամուտ չենք կամենում լինել այդ մասին. որովհետեւ առաձրն ասում է. «Հին դարմանը քամու չեն տալ». մեզ այժմ հետաքրքրում են այն միջոցները՝ որ գործ են դրվում պարաբերը վճարելու համար. եւ մենք բարւոք էինք դատում Եգիպտոսի թեմի հետ եգիպտական կալուածներն էլ ըստ արդար իրաւանց յանձնել իւր տիրոջը, որ է Երուսաղէմի Հայոց վանքը: Որովհետեւ զինուորական տրոյ վերայ յաւելայումն պարտուց բարձման համար կարող է գայթակղեցնել ժողովրդին՝ որ սովոր է յոժարակամ նուիրել բարեգործական սուրբ հաստատութեանց իւր արդար վաստակից, որքան եւ իւր միջոցները ներումեն. որովհետեւ ժողովարարութիւնը, որ այժմ յաճախ կրկնվումէ, եթէ չի էլ զզուեցրել կարող է զզուեցնել ժողովրդին. այն ինչ Երուսաղէմի եգիպտական կալուածների հաստոյթը բարւոք մատակարարութեամբ մշանջենաբար կարտադրէ եւ այդ արտադրութիւնը բաւական երեւացող բան կը լինի Երուսաղէմայ վանքի համար՝ որոյ արդեանց մեծագոյն մասը՝ ուխտաւորների նուէրներն են, որք ըստ դիպաց նուազում եւ աւելանումեն:

Բայ ի եգիպտական կալուածներից՝ Երուսաղէմի վանքը ունի ուրիշ մշանջենական մուխ աղբիւրներ՝ որոնց օրինաւոր մատակարարութիւնը կարող է բաւական շահաբեր լինել վանքին. եւ մեր ցանկութիւնն էր այդ բոլորը կանոնաւոր դրութեան մէջ տեսնել. մենք սպասում էինք որ Վ.սեմ: Սահեան փաշայ իւր վերայ դրուած պարտքը Երուսաղէմայ գործոց մասին այնպես կը կատարէր, որ արդիւնքը գոհացուցիչ լինէր, այլինքն. եթէ Երուսաղէմայ վանքը չը կարողանար իւր մեծագումար պարտքի տոկոսը վճարել, գոնէ իւր իսկական եկամուտներով կարողանար իւր ծախքը հոգալ. Արարատի ընթերցողները Սեպտեմբեր ամսոյ տեսարակի «Կ. Պօլսոյ ձայն» վերնագրով բաժնում դաւ ի սիրտ կը տեսնեն, որ Երուսաղէմ 1882—83 տարւոյ հաշուեցոյցի մէջ 2500 ոսկի (մօտ 25000 րուբլի) բաց է ունեցել. Երուսաղէմ՝ որի տպարանը չունի նախկին ճոխութիւնը, որի դպրանոցը այժմ չունի նախկին ընդարձակութիւնը. որի պատրիարքը Կ. Պօլսումն է եւ վանականներից շատերը դրուած են. որքան ծախք ունեցած պէտք է լինի Երուսաղէմ՝ որ մարդ նարտափով չը նայէ 2500 ոսկուց բացն վերայ: Ինչ օգուտ ուրեմն այնքան ջանքերը, երբ նոյն տեսակ բաց եր միշտ տեղի պէտք է ունենան:

Մենք նոյն յօդուածի մէջ տհաճութեամբ նկատեցինք ոմանց վանականների երուսաղէմից հեռանալը, եւ թերեւս կի շեղ էինք պատճառները: Այդ յօդուածի մէջ ասուած էր, որ վանականները ցմահ պէտք է կապուած լինեն իրանց կրօնաւորութեան տեղւոյն հետ, որպէս ղի այդ տեղերը նոցա տունը համարուին իսկ իրանք՝ այդ տեղերի զաւակները: Այդպէս ասելու պատճառ կայ. որովհետեւ եթէ մի մարդ մի տեղի հետ կապուած է, աշխատում է այդ տեղը հարստացնել եւ ճոխացնել իւր սեպհական վայելչութեան համար. իսկ եթէ կապուած չէ, այն ժամանակ նա աշխատում է տեղը իւր սեպհական գրպանին ծառայացնել:

Մեր խորհրդածութեան մի կէտն էլ այն էր, որ Տաճկահայք առհասարակ բարեհաճ կամք ունենային հասնարակական տուրքերով կառավարուած հաստատութեանց գիտակ առնել Ռուսահայոց: Տեղի անձկութեան պատճառով՝ հզրափակում ենք մեր խորհրդածութիւնը տպելով Երուսաղէմայ նուիրակ Արժ. Մամբրէ վարդապետի յօդուածը, որ պատասխանելով մեր այն խորհրդածութեան՝ մեր ենթադրութիւնից շատերը արդարացնում է. մի կէտում Արժ. Հայրը մեղադրում է մեզ, որ որպէս թէ կամաւ անտեղեակ ենք ձեւանում այն բոլոր հրատարակութեանց, որոնք խնդիրը բացորոշեն կացուցանում. գուցէ այդ տեսակ հրատարակութիւններ կան, սակայն այս եւս անհրաժեշտ է որ մենք Ռուսահայքս միջոց չունենք Տաճկաստանում բոլոր հրատարակութեանց հետեւելու. այս պատճառով էլ այն խորհրդածութեան մէջ ասել էինք, որ Պօլսոյ թերթասիրները լաւ կանէին ազգային ընթացիկ գործերը իրանց գրութեանց նիւթ առնել, քան պարահանդէսները եւ այլն: Վարձեալ կրկնում ենք, Տաճկահայոց գործերին գիտակ լինելու համար պէտք է որ մի ներքին կապ պահենք, այսինքն. մեր Ռուսահայոց մամուլի էջերը բանանք հարկաւոր տեղեկութիւնները հիւրընկալելու՝ ի գիտութիւն ընթերցողաց. այս իսկ նպատակով բաց ի Արժ. Մամբրէ վարդապետի պատասխանից՝ Երուսաղէմի գործոց վերաբերութեամբ, Եգիպտահայոց գործոց մասին եւս տեղեկութիւն հաղորդել կամենալով, արտատպում ենք «Արշալոյս Արարատեան» լրագրից խմբագրի նախաբանով Եգիպտոսից գրուած մի յօդուած, որ մի հարատար գրչի արտադրութիւն է եւ ունի

այնպիսի առնարկութիւններ՝ որոնք ցանկալի պարզաբանութեան կարօտ են: Ահա Աւժ. Մամբրէ վարդապետի նամակը:

. . . . ԽՄԲԱԳԻՐ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՑ,

Արարատ ամսագրոյ Յունիսի համարը պատահմամբ կարդացի. պէտք անկեղծ խոստովանիլ, որ իւր ընտիր և օգտակար բովանդակութեամբն արժանի է ողջամիտ բանասիրաց ուշադրութեան. (ի՞նչ փոյթ որ աղբիւսասէր Աքաղաղք մարդարտի հատը անօգուտ համարին.)

Նոյն թուոյ մէջ բաւականութեամբ կարդացի նաև «Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵՒ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՑ ՎԻՃԱԿ» վերնագրով համալից պատուական յօդուածը, որոյ մասին ես իրր միաբան Ս. Երուսաղէմի կը գամ ներկայիս իմ խորին շնորհակալութիւնս յայտնելու և ըստ կարի մի քանի թէթեւ բացատրութիւններ տալու, զոր եթէ արժան դատիք, խնդրեմ ներկայ համարաւ հրատարակել բարեհաճիք.

Ս. Երուսաղէմի կալուածոց Եգիպտոսի մէջ բռնաբարուելուն և զանոնք նոյն վիճակին հետ Ս. Երուսաղէմին դարձնելու մասին Ձեր խորհրդածութիւնք, դիտողութիւնք և առաջարկք խիստ իրաւացի են և արդար, մանաւանդ այն՝ թէ,—այդու թերևս Պարտուց Բարձման Ցանձնաժողովը կարօտ չը լինի զինուորական տրոց յաւելումն անել—, որ արդարև մեծ անպատեհութիւն է ժողովրդեան արդէն դառն և հարստահարեալ վիճակը մի այդպիսի յաւելուածով առաւել ծանրաբեռնել, որ ինչպէս շատերուն նոյնպէս և մեզ առաւել անհաճոյ է, ժողովուրդը պէտք սիրով, յօժարութեամբ և գիտակցութեամբ մասնակցի և ոչ թէ պետական բռնութեամբ. Շատ արդար և խիստ օգտաւէտ բան կը լինէր արդարև, ինչպէս Եգիպտոս նոյնպէս և յայլուր գտնուած վանական հասոյթք, նուէրք, կտակք և այլ սոյնպիսի արդիւնքներն անկորուստ ճշտութեամբ տեղ հասնէին, և արդի նեղ կացութեան մէջ անգամ այդպիսի ղրկանաց չը հանդիպէր վանքը . . . մանաւանդ եթէ այս տագնապալից ժամանակում այդ հոգացողութեան հետ՝ Ազգայնոց կողմէն մի քիչ բացառիկ նպաստ և օգնութիւններ լինէին, տարակոյս չը կայ որ Ս. Երուսաղէմի Հայոց վանքը շուտով կազատէր այս ծանր պարտքէն և կապահովէր իւր վիճակը, դարձեալ յօգուտ Ազգին.

Արարատի խմբագրութիւնը, որ այդքան հմտութեամբ և խոհուն խորհրդածութեամբ կը խօսի Ս. Երուսաղէմի գործոց մասին, դժբաղդաբար կ'անգիտանայ Վ. սեմ. Սահիան փաշա Ասլանեանցի ի Ս. Երուսաղէմ պատուիրակութեան պաշտօնին արդեանցը, որ մինչ ցարդ բաւմիցս հրատարակուած է թէ նոյն ժամանակ լրագիրներով, թէ Ազգային ժողովոյ ատենագրութեամբ, թէ Արձագանքի անցեալ տարուայ մի քանի համարներով և թէ Պարտուց Բարձման Ցանձնաժողովոյ յայտարարութիւններով, որոցմէ առաւել տեղեկութիւն ցանկացողը կարող է ան-

ձամբ տեսնել ժողովոյ և վարչութեան ատենագրութիւնքը և թերթել պաշտօնական գործերը, զի ինչ որ կարելի էր հրատարակել, արդէն հրատարակուած է ամենայն բաւականութեամբ։ Իսկ այն, որ Արարատի խմբագրութիւնը չանցանք կը համարի կարծել, որ—Նորին Վսեմութիւնը զրամական օժանդակութիւն ընդունած լինի, այնպիսի կարծիք մեզ համար ևս չանցանք է, և ով որ մի այդպիսի կասկածի տեղիք կըտայ, ըստ իս մեծ անիրաւութիւն արած կը լինի, գոնէ ես անհատապէս այս վստահութիւնը ունիմ։ Վասն զի Նորին Վսեմութիւնը անձամբ տեսնելով Ս. Տեղեաց վերայ Հայ ազգին ըռնած կարևոր դիրքը, Միաբանութեան կրած անընդհակայելի ծանրութիւններն ու տքնութիւնը և ազգային իրաւանց, պատուոյ և փառաց անաղարտ պահպանութեան համար արած անձնազոհութիւնքը, իւր կորովի և խորազննին նկատողութեամբ և քննութեամբ պայծառ տեսնելով պարտուց պատճառ եղող անխուսափելի պատահարները, զգալի թիւեր ժամանակակից թուականներու հետ բաղդատելով տեսաւ և ի սէր Ս. Տեղեաց և ազգային իրաւանց վառուած բորբոքած՝ նա ինքն կարեկցաբար առաւել ջոհաբերութիւններ արաւ վանքին մէջ և ի Պէյրութ, անխոնջ և անհնար հոգալով և դարմանելով տակաւ ու հիւանդ Միաբանութիւնը, ես իսկ վայելած լինելով իւր և Աղնուազարմ Տիկնոջ և զաւակաց գութն ու կարեկից խնամքներն ու ջոհաբերութիւնքը, խոր ի սիրտ զգածուած անմոռաց կըյիշատակեմ, ասանկ աղնուական զգացմանց տէր, ազգասիրութեամբն ու իրական արգեամբը ծանօթ պատկառելի մի անձնաւորութեան մասին այդպիսի կասկածներ մեծ անտեղութիւններ են և վիրաւորիչ Հարուած Նորին Վսեմութեան, և թերևս նախանձոտաց չաչաղանքն եղած է մի այդպիսի կասկած հնարելու առիթ տուողը։ Հանդերձ այսու ամենայնիւ՝ եթէ մի այսպիսի հաւատարիմ անաչառ գործիչի մասնաւոր մի ընծայ, նուէր կամ վարձատրութիւն և կամ ինչպէս գուք հաճած էք ասել, զրամական օժանդակութիւն եղած լինի, մեք ոչինչ անպատեհութիւն չենք տեսներ այդ տեղ, միայն թէ գործը տրուած չը լինի այդ զրամական օժանդակութեան համար, այլ օժանդակութիւնը կամ նուէրը գործին հաւատարիմ կատարման համար։

Գեր. Երեմիա Ս. Եպիսկոպոսին առաջին հանգանակութեան, հանդերձ գանձանակաց, կտակաց և կալուածոց արդիւնքներով լրվանդակ գումարն է 24,251 ո. 2 կ. (քսան չորս հազար երկու հարիւր հիսուն և մէկ ռուբլի, երկու կոպէկ), որ նոյն թուականներու պարտուց պակասելն կիմացուի, որ պարտուց վճարուած է, որոյ հաշիւը տրուած է Ազգ. Վարչութեան. (այս մասին տես և մեր նոր հրատարակուած «Ս. Երուսաղէմի մասին տեղեկութիւններ» վերնագրով տետրակը, զոր ի մօտոյ կտտանայք)։ Իսկ Երեմիա Սրբազան երկրորդ անգամ հանգանակութիւն չարաւ, զի Վեհափառ Հայրապետը չը թոյլատրեց և ունայն յետ դարձաւ, զոր գուք քաջ գիտէք։

Գալով մեր նուիրակութեան, Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր և Ցանձնաժողովոյ ջանից հետևանքին, ի՞նչ կըկամիք որ ասեմք, քանի որ պետ ղգալի հետևանաց չենք հասած և եղածներն յայտնի են . . . , Միթէ չէ՞ք գիտեր, որ այս դէպքում ևս անխիղճ և անխոհեմ արգելքներ մի տարի ամբողջ խափանեցին հանգանակութեան շարունակութիւնը. միթէ անծանօթ է Ձեզ, որ դեռ Տաճկաստանի հանգանակութիւնը չէ յայղողած. չըգիտէ՞ք որ յաճախ հանգանակութեանց պատճառաւ ժողովուրդը ձանձրացած և չարամիտներու անխոհեմ հրատարակութեանց առթիւ գայթակղած, այս կարևոր գործին ևս անհամակիր սառնութեամբ կըվերաբերի. Ձեմ կարծեր, որ մեր երկուսի երկու տարուան հանգանակութեան գումարի մասին, որ հազիւ 20,000ի կըհասնի, անտեղեակ լինիք, դի մեք ամեն տեղի հանգանակած գումարներս կըհրատարակեմք նոյն տեղէն մեկնելու ատեն, և յանձնած եմք Մեծ. Մուրադեան եղբարց ի Տփղիս, որ կըփոխադրեն Ցանձնաժողովին և նա կըգործածէ պարտուց վճարման.

Դուք, Արժ. Հայր, որ այդքան հետաքրքրած՝ ըրջամիտ խորհրդածութեամբ կըգրէք, միթէ չըգիտէք, որ Ս. Երուսաղէմի Միաբանութիւնը միշտ հարուածներ կրած է և կըկրէ, արգելքներու պատահած է և կը պատահի ի վնաս իւր նիւթական և բարոյական շահուց, ինչպես միշտ յօտարաց, նոյնպես և երբեմն յազգայնոց և երբեմն և իւր երախտաւորեալ եղբայրներէն . . . , — Այո՛, գիտէք և կըվկայէք. կարծեմ անծանօթ չէ Ձեզ, երբ Ամեն. Տ. Մկրտիչ Խրիմեան Ս. Հայրիկի Պատրիարքութեան օրով հաղար խնդիրներէ և բողոքներէ յետոյ հազիւ թէ Ս. Երուսաղէմի պարտուց խնդիրն ուշադրութեան կատնուէր, և ահա ժողովոյ խռովութիւնը և Ս. Հայրիկի հրաժարականը խափան կըգառնայ. բայց ի՞նչ հարկ հեռի գնալ, ահա դեռ նոր դէպք, որ իւր թարմութեամբ ամենուն մտքին մէջ կենդանի է. ահա Օգոստ. ամսոյ 5ին «Ս. Երուսաղէմի պարտուց ներկայ վիճակի մասին տեղեկութիւն» կը բերէ վարչութիւնը ընդհանուր ժողովոյ, բայց չնչին, անիմաստ և անօգուտ միջոցներով մը ժողովը կըխաբնուի, ազգային գործոց կենդանի նահատակ Ամեն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայրը կըհրաժարի և մեր խնդիրը դարձեալ կըմնայնուի անյուշութեան. Տասն և ութն տարիէ ի վեր եղած ասանկ խափանարար առիթներ, անակնկալ դէպքեր և անխուսափելի պատահարներն եթէ միայն իրենք ցանկ շարակարգեմք, զարմանալի կըհանդիսանայ Միաբանութեան տոկունութիւնը և անիմանալի խորհուրդ կըդառնայ միայն սա խնդիրը, թէ «ինչպես եղեր է, որ պարտքը մինչ ցարդ միլիօնի չէ հասած»։

Հետաքրքիր եք գիտնալ թէ, «Ինչի՞ Ս. Երուսաղէմի վանականք յաճախ կըմեկնեն վանքէն», — նախ, որովհետև Ս. Երուսաղէմի վանքին գործերն ու Ս. Տեղեաց պաշտամունքը ծանր, սնունդը՝ սակաւապէտ, նիւթական շահը փոքր և անհաստատ է. — Ե. վանական կեանքը խիստ,

ուրիշ վանքերու նման չունի ոչ բնական և ոչ արհեստական զբօսավայրեր, հաճոյք և միխիթարութիւն — Գ. Տկարակազմ, հիւանդոտ և փափկասուն կեանք վարողներուն համար պաշտօններն անտանելի են. — Գ. Պաշտօններն բանագէտներուն անյարմար կըգան. — Ե. շատերն ալ ոչինչ պատճառ չունենալով դուրս հրթռալու ցանկութեամբ կըմխոստանան իշխանութեան դէմ և բանը ծայրայեղութեան հասցնելով՝ կը մեկնին. — Զ. և վերջապէս, քանի համոզուած լինելով, որ դուրս ելնելով աւելի գիւրութեամբ շահաւէտ գործ, պաշտօն, աստիճան և իշխանութիւն պիտի ընդունին, ինչպէս ընդունուած են ընդդէմ Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգ օրինաց. և թէպէտ Մխիթարութիւնը շատ անգամ բողոքած է այս չարեաց դէմ, բայց ոչ ոք ուշադրութիւն չէ դարձուցած, ցանկալի է որ Արարատի ձայնը լսելի լինէր և այս չարեաց վերջ դրուէր.

Խորին շնորհակալութիւն Ձեր յայտնած ցանկութեանց և արդար պահանջից մասին, ի սրտէ կըմաղթենք նոցա իրագործութեան համար և կըմնամ աղօթարար

Միաբան և նուիրակ Ս. Երուսաղէմի

Մամբրէ Վ. Ե. Մարկոսեան.

1883, Օգոստ. 27.
Նոր Նախիջևան.

Ահա եւ Աբշալոյս Արարատեան Լրագրի հրատարակութիւնն.

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԴՈՐՁԵՐԸ

Ասլանեան Անիփան փաշա. — Հարենց Մարտիրոս էֆէնտի. — Մեսրոպ եպիսկոպոս. — Ազգային քաղաքական ժողով. — Տէր Կիրակոս Պատրիարք:

Գահիրէի նշանաւոր ազգայիններու կողմէ, տեղւոյն ազգային գործոց յոռի ընթացքը քննադատող գրութիւններ հասած են մեզ. Այս գրութեանց հետեւելը, ինչպէս նաև այն մանաւանդ տեղեկութիւնները, զորս գալ անգամ պիտի ներկայենք մեր ընթերցողաց աչացն ու գատողութեան, իրենց ծանրակշռութիւնն ունին և պայծառ ու մեկին կը ցուցնեն թէ, որքան ձախող և թիւր քաղաքականութիւն մը բռնած է Պատրիարքարանը այս խնդրոյն մէջ.

Հարկ չ'ենք ղգար թեպէտ, առ այժմ մեր մանաւանդ տեսութիւններն ընել, քանի որ գրութեանց պատասխանատու հեղինակները, որք կրնան իշխանութիւններ համարուիլ Գահիրէի Հայ Հասարակութեան մէջ, լրջաբար քննադատած և այսու՝ որոշ կերպով բացատրած են այն սխալ ճամբան, ուր մտած է Պատրիարքարանը Գահիրէի ազգային գործերը լուծուելու համար, — հարկ չենք ղգար՝ սակայն աւելորդ ալ չէ կարծեմ ըսել թէ, Պատրիարքարանը եթէ դիտմամբ, կամ աղդեցութեամբ և

կամ պարզամտութեամբ ըրած է այդ կերպ տնօրինութիւն մը (որոյ դժուար է հաւատալ), շատ սխալ ընթաց մ'է բռնածը։

Մենք՝ իրաւունք ունինք կարծելու և վստահութիւն ունինք հաւատալու որ, աւելի դիւրութեամբ գոհացուցիչ վախճանի մը պիտի յանգէին Եգիպտոսի ազգային գործերը, եթէ Պատրիարքարանը քիչ մը աւելի հեռատեսութեամբ ձեռնարկէր այս գործին, այսինքն եթէ իր կարգած պատուիրակութիւնը յանձնարարած ըլլար այն անձին՝ որոյ զօրութիւնն ու ազդեցութիւնը մեծամեծ դիւրութիւններ կրնային ցուցնել այդ գործոց խաղաղօրէն և նպաստաւոր կերպով կարգադրուելուն, այն անձին, հարկ է միթէ անուանել, որոյ համար այնքան դիւրին է Եգիպտոսի ազգային պարտուց բարձման միջոցը խորհիլ և գործադրել, կամ գոնէ գործադրել տալ, որքան դիւրին է Պատրիարքարանի համար կոնդակ մը գրել և կամ պատուիրակ մը ղրկել։ Սակայն Պատրիարքարանը, գիտութեամբ կամ անգիտութեամբ սխալեցաւ և փոխանակ այն անձին համակրանքն ու ազգասիրական շարժումն ստանալու, նորա արհամարանքն ստացաւ։ Կրնանք վկայել այս ըսածնիս, և Պատրիարքարանի ալ դատողութեանը յանձնել՝ թէ որքան տարբերութիւն կայ այն ընդունելութեան մէջ՝ զոր ըրաւ այն անձը, այս անգամ գօլէրայի առեն Գահիրէի աղքատ հայոց համար նպաստ տուած առեն, քան այն ընդունելութեանց մէջ զոր ոչ նուազ պարագաներու մէջ ցուցած է։ Եւ միթէ արհամարանօք 50 ոսկի՞ միայն կը ղրկէր այն անձը՝ որ 1865ի գօլէրային առեն 350 ոսկի չնորհեց, և ինքնաբերաբար, մի և նոյն ներպատակին համար։ Ինչ որ է, առ այժմ թողունք որ Գահիրէի հայոց լրջամիտ մասին կարծիքը խօսի։

Գահիրէ 31 Յուլիս 1883։

«Թէրճէմանը Ի֊ֆքեար» ի Յուլիս 14 թիւ թերթն կը հրատարակէ թէ՝

Կ. Պօլսոյ քաղաքական ժողովը, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, վերջապէս Գահիրէի ազգային գործերը կարգադրելու համամիտ է գտնուեր, Ն. Վսեմ. Արսլանեան տօքթօր Ստեփան փաշայի մի տեղեկագրոյն վրայ, յիշեալ քաղ. ժողովը կարծիք է հարցուցեր Ս. Մեսրովպ եպիսկոպոսի, որ այլ եւս քնաւ երբէք Գահիրէի ազգային պարտուց խնդրոյն մէջ, մանաւանդ չունենալն յայտնելով հանդերձ յուսացեր է թէ հատուցման մասին միջամտութիւն մ' ընելու կարող է։ Քաղ. ժողովն Մեսրովպ եպիսկոպոսի միջամտութիւնը ազգաշահ և կարևոր նկատելով և միանգամայն գիտնալով թէ բարոյական աղդեցութիւն մը կրնայ ունենալ պարտատէրց վրայ, սոյն խնդրոյն հաշտարար կերպիւ վերջանալը կարելի տեսեր և որոշեր է յիշեալ եպիսկոպոսի համաձայնութեամբ Գահիրէի ազգային պարտուց մի մասը զեղչել, հատուցանել զոյն, և վճարմանը համար պէտք եղածն հոգալու

մասին գրել Գահիրէի Ազգ. վարչութեան, Քաղ. ժողովոյ նոյն որոշումն պարտաւորց ծանուցանել Մեսրովպ եպիսկոպոսի յանձնարարուեր է, զի սա փոխանորդ և միջնորդ կանգնէր է նոցա կողմանէ։

Մի և նոյն թերթը յուլիս 21 թուոյն կը յաւելու յայտարարելով, Մեսրովպ եպիսկոպոս և Հարենց Մարտիրոս էֆէնտի պայմանադրեր են Քաղ. ժողովոյ որ եթէ իրենց իրաւախոհ միջնորդութեամբ որոշեալ հազար ոսկւոյ գումարն ի Կ. Պոլիս հատուցուի, իրենք ալ Գահիրէի ազգային կալուածոց (եկամտից) վրայ դրուած սէքէսթրօնները վերցունել պիտի տան։ Ուստի Քաղ. ժողովն հեռագրեր է Ն. Վսեմ. Սահիպան փաշայի, որ այս գումարը, փոխանակագրով մը Կ. Պոլիս ուղարկէ։ Հոս կը յիշենք, կըսէ թերթը, թէ սէքէսթրոյի տակ եղած ազգային կալուածոց եկամուտք մի մասամբ Հարենցի անցած են։

Տեղւոյս ազգային գործոց վրայ տեղեկութիւն չունեցող մեր Պատ. ազգայինք պիտի ղմայլին Պատրիարքարանի այս անմիջական գործադրութեամբ յաջորդուած որոշմանց վրայ. դիւրին է նոցա միայն բայց ոչ ճշմարտութեան աչքը շլացունել այդ ոսկեզօծ փոշւով. զի եղելութիւնք ինքնին կը մեկնեն Պատրիարքարանի ընթացքն, որ բոլորովին անկեղծ և անքասիր չէ, մանաւանդ Գեր. Ս. Պատրիարք Հօր, որն որ վերջին օրերս, Հարենցի, Կիւղէլ օղլուի կամ Հեռաթիի և Մեսրովպ եպիսկոպոսի մէջտեղ արդէն յարդարեալ համաձայնութեան տեղեակ էր՝ Հարենցի մի ընտանեկան նամակէն, որոյ ընդօրինակութիւնը, Վ. Արսլանեան Սահիպան փաշայի շնորհիւ, այսօր Գեր. Ս. Պատրիարք Հօր ձեռքն է և իրեն դէմ անուղղակի ամբաստանութեան թեթև արատ մ՝ ալ կը պարունակէ։

Պատ. Քաղ. Ժողովն անշուշտ տեսած է այն խորհրդաւոր գիրն որոյ կրնայ մեծ կարևորութիւն տրուիլ՝ ճարտարութեամբ ձեռք ձգուած խարդաւանքի մը թելն համարուելուն։

Ճշմարիտն, ազգային հին խնդիրներ լուծելու գեղեցիկ միջոցներ։

Պատրիարքարանի կողմանէ Եգիպտական խնդրոց ամենէ յետնոյն նախապատուութիւն մը տալով անկեղծութեան և իրաւանց հակառակ տրուած որոշումն, որոյ յարդարեալ կարգադրութիւն մը լինելն յայտնի է Եգիպտահայոց, գուցէ կարենայ ոմանց աչքին արդարանալ այսու թէ՝ անհրաժեշտ էր այդ պարտուց հին խնդիրն որ և է կերպիւ վերջացնել Պատրիարքարանը գլխի ցաւէ մ՝ ազատելու համար։

Բայց ինչպէս պիտի արդարանան մարդկութեան, խղճի, և հասարակութեան ողջամիտ դատողութեան առջև։

Ա. Պատրիարքարանի լիազօր նուիրակ Ն. Վսեմ. Արսլանեան տօքթէօր Սահիպան փաշա, որ ապօրինի պահանջք մը (թէև միջազգային դատարաններէ վճռուած, բայց ազգին առջև խայտառակութեան դրշմ կը կրէ) փոխանակ օրինաւոր ընտրութեամբ կազմուած ժողովոյ մը որոշման ենթարկելու և նորա ձեռօք գործադրելու, նոյն իսկ խայտա-

ռակուլեան հեղինակին գրպանը ուռեցնելու ծիծաղելի դիրքով կ'ներկայի. իբր թէ նա ոչ թէ կեղծ պարտատէր մ' այլ ստուգիւ պարզ իրաւախոհ միջնորդ, ոչ թէ մեր հարստահարն՝ այլ բարերարն եղած լինէր։

Բ. Հարենց Մարտիրոս էֆ. անուն անձը՝ որն որ կիսամեռ մարմնոյ մը վրայ ճանկի և կտցի վերջին հարուածը տուողն ազգաւի տխուր դերը կ'կատարէ, կատր մը ինք յափշտակելով։

Գ. Եգիպտոսի նախկին առաջնորդ Ն. Ս. Մեսրովբ եպիսկոպոս, որ իբր գող ամբաստանուելէ վերջ՝ այսօր Պատրիարքարանի մօտ վաճառաց միջնորդի դեր կ'կատարէ և 1000 ոսկին համեմատաբար գրպանելու ազգասէր ծառայութիւնն ընողի կերպարանքը կ'թօթափէ իր վրայ ծանրացած ամբաստանութեանց աղտը նոյն իսկ Պատրիարքարանի մէջ։

Դ. Պատ. Փաղաք. Ժողովն Կեդր. Վարչութեան, որ Պատրիարքարանի հին որոշումները դիւանատան փոշոտ անկիւնները կ'մոռնայ, քննչաց տեղեկագիր, Եգիպտական կառավարութեան ուղղեալ բողոք, պաշտօնագրեր ազգային որոշմունք և տնօրինութիւնք, 1472 ոսկւոյ խնդիրը միջազգային և մերազգային ատեաններու առջև փաստաբանելու և լուծելու համար գրեթէ նոյնչափ գումարի հասած անտեղի ծախք, բոլորն ալ յօգս ցնդելով՝ ինքն, Փաղ. Ժողով Կեդր. վարչութեան, այսօր կը ճանչնայ, կ'հաստատէ և հոս իր լիա զօր գործադրին կ'հրամայէ վճարել ի Կ. Պոլիս Գահիրէի ազգ. պետուկէն գեղչեալ պարտուց մի մասն 1000 ոսկի։ (???)

Ե. Գեր. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայրն, որ կ'նախագահէ այս ամէն աջողակ ձեռնարկին և օրինաց գործադրութեան հսկողի մ' անաչառութեան հակառակ, անտարբեր կնայի մեր վիճակի ամենէ նուիրական իրաւանց ոտնակոխուիլը։

Զ. Եւ ամենայն երևելի և աներևոյթ հրեշտակք և արբանեակք որք ընդ սոցին։

Եւրոպացիք վաճառականութեան և առևտրական գործոց մէջ իրաւամբ խիստ յարմար և ճարտար կ'դատեն Հայ ազգը, և ստուգիւ, ի՞նչ բան կարելի է գտնել որ Մեսրոպ եպիսկոպոսի պահանջքն (որոյ մէջ պատրիարքարանի տրուած կաշառքի խնդիր մ' ալ կար) այս կերպիւ հատուցանելու համար, շահավարութեան գեղեցկագոյն օրինակ մը կարենայ ընծայել։ Պարծա՞նք մեր Պատրիարգարանի այդ տաղանդին։ Շահավարութիւն մ' որոյ հեղինակները կարծես իրարմէ աւելի նախանձախնդիր Գահիրէի ազգային ոգեվար վիճակը գարմանելու պատրուակաւ, նորա ժողովրդային բոլոր իրաւասութեան ձայն հապ ճէպ խեղդելու գործին մէջ հոդեւանդ կաշխատին վիրար գերազանցել։ Կոշտ բռնցի մը անհատական և ընկերային ազդօրուտ ձգտումներու և ձեռնարկութեանց դէմ զոր տուողն համբոյրի կ'ձևակերպէ քմծիծաղով մը, կ'ջլատէ ազգ. գործոց բարեփոխմանց վրայ յուսադիր սիրտերու ամէն եռանդ։

Երբեմն մեր սիրելի Հովուին խարդաւանք մեր ազգ. սնոտւկին վրայ բեռնաւորեալ պարտուց վճարումն առ մի երկրորդ, վերջապէս, այո՛, անհրաժեշտ էր, տասը տարուան միջոցին Մեսրովպ եպիսկոպոսի ճարտար ձեռօք, մանաւանդ նպատակաւ պղտորեալ ջրին մէջ որսուած ձուկն էր այն, մեր ազգային իրաւունքը պաշտպանելու գործին մէջ անգիտութեան տրուած տուգանքն էր. միջազգային դատարանքն իսկ պատրեցան և վճռեցին այդ պահանջքի Հատուցումն. Սոյն Հատուցման յապաղումն՝ ազգային սնոտւկին վնասաբեր, տոկոսի դիզումն՝ անտեսագիտութեան անհմուտ անձի գործ, կալուածոց եկամտից վրայ սէքեստր օնները ընդերկար թողուլ՝ սահմանադրական վարչութեան մէջ օտարազգեաց ձեռք տեսակ մը տիքթաթօրութիւն կրնային Համարուիլ։

Բայց միթէ անհրաժե՞շտ էր այն խնդիրը վերջացնելու համար խարդաւանաց հեղինակին դիմել, նորա անձնական շահը իրաւախոհ միջնորդութիւն մը նկատել, նորա վրայ ծանրացած դատակնիքը կերպիւ իւիք վերցունել, արգարութեան խնդրուածքը ոտնակոխել, մոռնալ 1879 մայիս 19 թուականին տեղւոյս վարչութենէ առ Գեր. Տ. Ներսէս Ս. Պատրիարք ուղեալ գրոյն պարունակութիւնը և աւելի վերջը գայն հաստատող, Տէր Մկրեան քննիչ Հօր տեղակագիրն, որոնք Մեսրովբ եպիսկոպոսի արժանաւոր խորագիրն իր ճակտին վրայ դրոշմած են։ Միթէ անհրաժե՞շտ էր որ Ս. Պատրիարք Հայրն Եգիպտոսի վիճակը վերականգնելու համար իւր անտարբերութեամբ կամ միամտութեամբ գեռ ևս քաջալեր գտնուի կեղծ փոխանցումի մը գործառնութեանց շարունակութեանը, խարդաւանանք մ՝ որոյ, երբ դատավճռոց դէմ քիչ մը ուշ բողոքուեցաւ Հոս, միջազգային դատարանաց քուր տ՝աբէլի օրէնսգէտ նախագահն իսկ, սոտւգութիւնը ճանչնալը ցաւօք խոստովանեցաւ յատենի։ Միթէ անհրաժե՞շտ էր Պօլսոյ Քաղք. ժողովոյ մասնաւոր նկատմանց զոհ ձգել մեր ազգային անբռնաւարելի իրաւունքն։

Ի՞նչ իրաւամբ և ո՛ր օրինաց տրամադրութեամբ մեր ազգային սընոտւկին ձեռք կ՝երկարէ նա՝ լիազօր նուիրակ մը միջոցաւ, որոյ վրայ կը մանաւանդ, կ՝ամիսուիէ ամբողջ Հասարակութեան մ՝ իրաւասութիւնն առ որում ինքն իսկ, Պատրիարքարան, ստորակարգեալ է։

Ի՞նչ կրնայ համարուիլ՝ երէկ ժողովրդային կողմն իւրացուննող դատապարտեալի մը ապօրինի ճանչցուած պահանջքը, այսօր ձեւի մը տակ գնել և վճարել անոր ձեռք նոյն իսկ իւր հարստահարած գանձին կտորներէն։

Ն. Վ. Արսլանեան Ստեփան փաշա, եթէ սովոր է իր կամքը, ժամանակը, ստակն և ազդեցութիւնը, մեր ազգային ձրի պաշտօնավարութեանց մէջ Պատրիարքարանի սոյն օրինակ որոշմանց գործադրութեան զոհելու և կանխելու, կը շնորհաւորեմք զինքն իւր լիազօրութեան մէջ, բայց կը ցաւիմք հոս յիշելու, ինչպէս որ Ն. Վ. սեմութիւնն ալ

քալ գիտէ, որ եգիպտական կառավարութիւնը՝ Օսմանեան Տէրութեան կողմանէ մեզ տրուած առանձնաշնորհութիւնքն պաշտպանող նուիրակաց միայն յարգ և օգնութիւն կընծայէ և ոչ թէ Պատրիարքարանի մասնաւոր նպատակներու ծառայող լիազօրաց։ Մեսրովպ եպիսկոպոսի ժամանակ ազգային խլրտումներն մեծ փորձառութիւն տուին կառավարութեան և իր դիւանատանց մէջ ցաւալի հետքեր ձգեցին նշանաւոր կարեւորութիւն մ՝ ունի իր աչքին տեղւոյս ուր և է գաղթականութեան մը բարգաւաճումն, և այս աւանդական է Մուհամմէտ Ալիի ժամանակէն, յարգելով նոցա բոլոր ազգային իրաւունք և առանձնաշնորհութիւնք։ այսու կ՝իմայլի Ն. Բարձրապատիւ Խոիվին խաղաղասէր համբաւը։

Արդ՝ հակիրճ կերպիւ նշանակենք Պատրիարքարանի անքաղաքագիտութիւնը և տեսնենք եթէ բռնաբարուած են մեր ժողովրդային առանձնաշնորհութիւնք նոյն իսկ մեր ազգային շրջանին մէջ և օսմանեան կամ եգիպտական կառավարութեանց առջև, Նորին Ս. Պատրիարք Հօր կոնդակին տրամադրութեամբն և Ն. Վ. Արսլանեան տօքթօր Ստեփան փաշայի իբր լիազօր Նուիրակ անուանմամբ որոյ ի՛նչ աստիճան պաշտօնական կարեւորութիւն մ՝ ունեցած ըլլալը ուրիշ առիթ պիտի յայտնենք։

Դանք կանգակին, այս գիրը երեք պաշտօն կ՝յանձնէ Նորին Վսեմութեան։

Ա. Պարտուց խնդիրը լուծել. — Նորին Վ. կ՝կարգադրէ և Պօլսոյ Քաղաք. ժողովը (մինչդեռ հոստեղինը կազմակերպեալ չէ տակաւին) կ՝լուծէ և իր գործադիրն հոս կ՝վճարէ եղեր։

Զարմանք, ո՞ր գաւառի, վիճակի, գիւղի կամ թաղի մ՝ իսկ ազգ. սնտուկը կամ արկղիկը, թո՛ղ թէ տուգանք մ՝ այլ ծախք մը հատուցանելու համար, առանց անոր տիրոջ ներկայութեան կամ հաւանութեան կրնայ եղեր լիազօրի մը ձեռօք վատնուիլ։ Մինչ Պատրիարքն իսկ ունի՞ այդ իրաւասութիւնը զոր տուած է Ն. Վ. Ստեփան փաշայի։

Բ. Ժողովները վերակազմել — Ի՛նչ հարկ, քանի որ մեկ կողմանէ լիազօր մ՝ ամեն ինչ տնօրինելու արտօնութիւնն ունի ըստ Պատրիարքարանի սահմանադրական օրինաց, և միւս կողմանէ տէր Սահակի օրով քանի մ՝ անձերէ ձեւակերպեալ մասնաժողովն վարչութեան մ՝ օրինաւորութեան գոյնն ունի տակաւին Կ. Պօլսոյ Քաղք. ժողովոյ աչաց առջև։

Մ՝իաբանեցէք, ողջամիտ ազգայինք, այս երկու հակասութիւնները։

Գ. Ընտրել առաջնորդ մը. — Որո՞ւ իրաւունք որո՞ւ կ՝տացուի, եթէ այդ ընտրութեան մէջ պարզապէս գաւառ. կամ թաղ. ժողովոյ մը նախագահելու ժամօք պէտք ենք ըմբռնել Ն. Վ. Ստեփան փաշայի լիազօրութիւնը, օրէնք կ՝պահանջեն Պատրիարքարանէ դլխովին և ոչ թէ մասամբ միայն յարգել տեղւոյս ընտրողական բացարձակ ի-

բաւունքն և իր ընտրելոց իրաւասութիւնն թէ պարտուց և թէ առաջնորդի մը ընտրութեան խնդրոց մէջ։

Տեղւոյս և հեռաբնակ ազգայնոց կ'թողումք մեկնել այս հանելու կն և արժանաւոր անուն մը տալ Պատրիարքարանի այս ընթացքին։ ըստ մեզ օրէնքի մը շնորհած իրաւունքն անդամատել օրէնքը ղեղծել է, անկից շեղիլ է։

Բայց ընդհանուր ազգին վերականգնման մեծ գործին մէջ բարձր քաղաքագիտութեանց վերևն սաւառնող քաղաքագէտ Պատրիարքարան կրնայ եղեր այսչափ օրէնագէտ չ'լինիլ։ Իւր այս ծուռ քայլերը մասնաւոր նպատակ մը չունի՞ն։ Ի՞նչ նոր փորձանք կ'պատրաստուի ազգին գլխուն, ուշադրութեան առնուած է։ Մինչ Պօլսոյ փաստաբան ազգայինք անաչառապէս իմաստասիրած են Եգիպտոսի խնդիրը։ Եւ ի՞նչպէս Պատրիարքարան պիտի ազատի այն պատասխանատուութենէ որ, մեկ կողմանէ, հակառակ Սահմանադրական սկզբանց, Ն. Վ. Սուլթան փաշան լիազօր գործիք կը կանգնէ, և միւս կողմանէ տեղւոյս ազգայնոց անբռնաբարելի իրաւանց յանդուգն ձեռք կ'երկարէ՝ ազգասին, դպրոցին և եկեղեցւոյն նուիրական լումային գողերու կոկորդը և իր Փրոպականթային աւազանը լեցնելով, որոյ վրայ հաշիւ և համար հարցնելու և առնելու բացարձակ իրաւունքն ազգայնոց ազատ քուէարկութեամբ ընտրուած օրինաւոր վարչութեան մը կ'պատկանի։

* * *

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ՃԵՄԱՐԱՆԻ։

—

Սեպտեմբերի 24 ին Ս. Գէորգայ տօնի օրը կատարուեց Ճեմարանի իններորդ տարեդարձը շքեղ հանդիսով։ Հանդիսաւոր Ս. պատարագիչ յետոյ Միաբանական Ուխտը ըստ իւրաքանչիւր աստիճանի եկեղեցական զգեստներով, առաջ՝ Ճեմարանի աշակերտները առաջնորդութեամբ ուսուցչական խմբի, յետոյ երգեցիկներու խումբը յաջմէ եւ յահեկէ ունելով Սրբազան Եպիսկոպոսներիւ Վարդապետներուն կիսաշրջանը, խաչ—խաչվառներով եւ ամենայն սպասուք բոլորեցին հանդուցեալ Տէր Գէորգ Դ-ի խաչանկար սեաւ թաւշեայ դիագարդով պզտոցած գերեզմանը։ Սկսուեց հոգեհանգստեան կարգ Վաղարշապատու եւ այլ տեղերից՝ (մանաւանդ Շիրակից ուխտ եկած) երկսեռ խուռն բազմութեան ներկայութեամբ։ Թափօրի հանդիսադիրն էր Ամենապատիւ Տեղակալ Տէր Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսը, եւ կարգավար՝ պատարագիչ Գեր. Տէր Յովհաննէս Սրբազան Եպիս-

կոպոս Տէր Յարութիւնեան: Հոգեհանգստեան կարգը վերջանալուց յետոյ «Քաջամարտիկ» շարականի երգաստացութեամբ թափօրը ուղղուեց դէպ ի Ձեմարան նոյն հանդերձանքով: Հանդարտաքայլ գնացքը վանքի արտաքին պարսպի հիւսիսային դռնից դուրս գալով, եւ հաստարակաց պարտիզի ու հիւսիսային պարսպի միջանցքով ուղղի հասանելով, դադարեց Ձեմարանի հիւսիսային սիւնազարդ գաւթի առաջ, ուր ըստ սովորութեան կատարուեց հոգեհանգիստ Ձեմարանի Հիմնադրի եւ Նորա Ճնողաց համար:

Տարեդարձի հանդէսը բացուեց Արժ. Յուսիկ Վարդապետի առենախօսութեամբ, որ քնաբան առնելով սերմանացանի առակը՝ յորդորում էր ամենքին նման լինել բարի եւ պարարտ երկրի՝ պտղաբերելու հարիւրաւոր վաթսնաւոր եւ երեսնաւոր: Այս առենախօսութեան հետեւեց աշակերտների երգաստացութիւնը. ապա Ձեմարանի Տեսուչ Մեծ. Պ. Արշակ Նահապետեան ամբիոնից կարդաց տարեկան ուսումնական հաշիւ, որ ընթերցողները կը կարդան այս ամսատետրում, հետեւեց երգ, եւ ապա Մեծ Պ. Կարապետ Կոստանեան բարձրացաւ ամբիոն եւ կարդաց մի ճառ, որի բովանդակութիւնը վերաբերում էր վանքերին եւ նոցա պիտանաւորութեանը ի հնումն, եւ այժմ եւս Ս. Էջմիածնի ազգին արած ծառայութեանը: Պարոնը խօսելով Ձեմարանի հիմնարկութեան մասին, աներեւակայելի ջրողութիւն համարեց Ձեմարանի այժմեան կազմակերպութիւնը թէ աշակերտների յաչող զարգացման եւ թէ նոցա քաջառողջութեան մասին. որով ապացուցվում էր ոմանց յոռետատների աննպատակ կասկածների անտեղութիւնը: Յուսով ենք տալ այդ ճառն եւս: Այսպէս ժամը $1^1/_2$ վերջացաւ տարեդարձի արտաքին հանդէսը, այնուհետեւ աշակերտները իրանց ուսուցիչների հետ Ձեմարանում, իսկ Միաբանական ուխտը աշխարհական անձանց հետ վանքի ամառնային սեղանատունը վայելելոյն հանդիսաւոր ճաշ: Միաբանական սեղանատունը Արժ. Խորէն Վարդապետ Ստեփանէ քնաբան առնելով Ս. գրքից «Առ գետս Բաբելացւոց» արտաշարժ կատրը, առենաբանեց հայրենասիրութեան վերայ:

Երեկոյեան՝ վանքում վառուած էին լապտերները, իսկ Ձեմարանում ճրագալոյց էր. գունագեղ ջահերով եւ լապտերներով զարդարուած էր Ձեմարանի հիւսիսային ճակատը, աշակերտնե-

բը իրանց քաղցրանուագ երգասացութեամբ հրապուրում էին բազմաթիւ ուխտաւորներին եւ վաղարշապատի հասարակութեան: Այս հանդէսն եւս տեւեց մինչեւ երեկոյեան 9 ժամը: Իսկ ուխտաւորների ուրախ հասարակութիւնը ուեղական նուագածութեամբ շարունակեց իւր զուարճութիւնը մինչեւ առաւօտեան արեւագալը: Նոյն օրը Ս. Պատարագից յետոյ ուխտաւորները զուարճանում էին ականատես լինելով լարախաղացներին եւ ականջալուր լինելով նուագածութեանց:

Համառօտ նկարագրելով այդ հանդէսները, դոցա տպաւորութեան տակ մնում է ասել թէ ժողովուրդը եւ այն եւս տորին դաստակարգը որքան կենդանի հաւատ ունի դէպի իւր հայրենի սրբութիւնները. որչափ ուրախ է, երբ նա իւր անմեղ հայեացքը ձգում է այնպիսի բաների վերայ, որոնք իրան համար հրաշալիք են թվում: եւ լինչ հոգեզմայլ տպաւորութեան տակ է մնում նա: Ս. յիմեան ուխտագնացութիւնը միայն կատարվում է անգիտակցաբար մանկական ջերմ հաւատով. երանի՜ այն ժամանակին, երբ այդ մանկական ջերմ հաւատի հետ կը միանայ եւ գիտակցութիւնը, իսկ հնութիւնները կարծարծեն հայրենասիրութիւն այդ ուխտաւորների մէջ, որոնք տարագրութեան մէջ նաբելացւոց ուռիների տակ նստող Իսրայէլացիների անձկով յիշէին իրանց հայրենիքն ու հայրենական սրբութիւնները՝ որոնք են եկեղեցին, լեզուն եւ կրօնը: Ահա Պ. Տեսչի ճառը:

ՍԱՐԵՆԱՊԱՏԻՒ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ,

ՍՔԵՍԳԱՓԱՐՍԱՔ ՀԱՅԲՔ

ԵՒ ՄԵԾԱՐՈՒ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Այսօրուայ կատարած հոգեհանգստեան կարգը յիշեցրեց մեզ այն մեծ կորուստը, որ կրեց Ձեմարանը անցեալ տարի Դեկտեմբերի 6 ին. Ազգիս Վեհափառ Կաթուղիկոսը կնքեց իւր կեանքը՝ խոր տրտմութեան մէջ ձգելով ամբողջ Ազգի հետ ի միասին եւ իւր ձեռակերտ Ձեմարանը, որի համար յընթացս երկար տարիների ոչինչ ջանք եւ հոգացողութիւն խնայած էր եւ որ հասել էր արդէն այն դրութեան, երբ մի քանի ամսից յետոյ առաջին անգամ պէտք է աւարտէին իւրեանց ուսման ընթացքը մի քա-

նի ուսանողներ, որոնցով սկիզբն էր դնուելու յաջորդ տարիներիւ համար հետ զհետէ Ագգին պարգեւելու բարձր ուսումն ստացած մանկավարժական պատրաստութիւեամբ ուսուցիչներ եւ եկեղեցական պաշտօնեաներ: Այսօր, երբ ձեմարանը իւր կարճատեւ գոյութիւնից յետոյ կատարում է իւր ինն տարեդարձը եւ առաջին շրջանի ուսումնասիրաններին մասին աւետում է հայ հասարակութեան, բաւական է այն Անձը, որ երկար տարիներ սպասում էր այս օրուան: Այո՛, այս տխուր յիշողութիւնը մեր ամենիս ուրախութիւնը տրտմութեան է փոխում:

Մանաւանդ զգալի էր Վ.Հ. Գէորգ Դ. ի մահը այն կողմից, որ ձեմարանը նիւթապէս անապահով դրութեան մէջ մնալով, շատերի մէջ կասկած էր մնում — մի գուցէ Վ.Հ. Հիմնադրի հետ ի միասին կնքէ իւր գոյութիւնը եւ այս մեծ հաստատութիւնը: Այս կասկածը բարեբաղդաբար միանգամայն անհիմն եղաւ. այսօր Ս. Սիոնցը իւր բոլոր ջանքը եւ հոգացողութիւնը գործ է դնում ձեմարանը իւր դրութեամբ պահպանելու, չնայելով վանքի ներկայ սուղ միջոցներին: Քանիցս անգամ Ամենապատիւ Սրբազան Տեղակալ Հայրը իւր եւ Սրբազան Սիոնցական Հարց եւ վանքի միաբանութեան կողմից յայտարարած է ձեմարանիս մէջ, թէ նոքա ուխտել են նոյնութեամբ պահպանել այս նուիրական տաճարի դրութիւնը: Եւ արդարեւ մինչեւ այսօր ամենայն սրբութեամբ կատարած ենք տեսնում այս ուխտը: Մենք պարտք ենք համարում հրապարակաւ յայտնել այս մասին, որպէս զի ամեն կասկած, եթէ կայ, փարատուի եւ ամենքը հաւատարմութեամբ վերաբերուին դէպի վանքի մտադրութիւնները ձեմարանի մասին:

Միայն նիւթական միջոցներով չէ որ կարելի է ապահոված համարել մի այսպիսի մեծ հիմնարկութեան ապագան: Ի՛նչ կարող է անել դրամ, երբ ջերմ համակրութիւն կամ հաստատուն կամք չկայ գործը առաջ տանելու համար: Այդ ջերմ համակրութիւնը, այդ հաստատուն կամքը մենք ակներեւ տեսնում ենք եւ ամենայն իրաւամբ այդ առհաւատչեայ ենք համարում, որ ձեմարանի յարատեւութիւնը վանքի կողմից միանգամայն ապահոված է: Մենք հարցի նիւթական կողմը երկրորդական ենք համարում, որովհետեւ շատ անգամ տեսել ենք որ, ազգը Ս. Աթոռոյս համար երբէք իւր լումայն խնայած չէ երբ զգացել է, որ

այդ գումարը չի վատնվում: Գործի համար դրամ չինայող ազգը՝ տեսնելով որ Ս. Էջմիածնի մէջ պահպանվում է մի ձեմարան, ուր աւելի քան երեք հարիւր աշակերտ է ուսանում, որոնցից երկու հարիւրը գիշերօթիկ են—ի հարկէ չի խնայելու եւ սորա համար: Այս հանգամանքները ի նկատի առնելով ձեմարանի դրութեան մասին միանգամայն ապահով կարող ենք լինել եւ հանգիստ սրտով շարունակել մեր գործը:— Դառնանք 1882—3 ուս. տարուայ տեղեկագրին:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1882—3 ուս. տարուայ

Ծրնթացս 1882—3 ուս. տարուայ Մանկ. ժողովը գումարեցաւ 24 անգամ ձեմարանիս վերաբերեալ զանազան խնդիրների վերաբերութեամբ: Սոցանից գլխաւորներն են.

Տարուայ սկզբում բացուեցաւ Երրորդ լսարանը, որով պէտք է բոլորուէր ձեմարանի մանրագիտական ընթացքը: Ինչպէս որ առաջին երկու լսարանները մանկավարժական ուղղութեամբ էին կազմակերպուած, այնպէս էլ նոր բացուած Գ. լսարանին նոյն ընթացքը նշանակուեցաւ մանկավարժական եւ փիլիսոփայական առարկաներով եւ գործնական պարապմունքներով: Ինչպէս որ մի կողմից մանկավարժութեան եւ սորա օժանդակ փիլիսոփայական գիտութեանց տեսութիւնն էր աւանդվում, միւս կողմից գործնական կրթութիւն էր մատակարարվում մանկավարժական արուեստի մէջ ընտելանալու համար՝ փորձնական դասերի, խորհուրդների եւ ժողովների միջնորդութեամբ, որոնց ղեկավարում էր պ. Սեդրակ Մանդինեանը: Անցեալ տարի մենք ուրախութեամբ յիշեցինք, թէ ինչ մեծ օժանդակութիւն պէտք է լինէր վարժոյի տեղափոխուելովը նախկին Ժառանգաւորաց Դպրոցի մէջ: Դորանով ոչ միայն ամբողջապէս ծխական դպրոցի երեք բաժանմունքների դասատուութիւնը յանձնուելու էր մեր լսարանցիներին իւրեանց վարժութեան համար, փոխանակ մի բաժանմունքի, ինչպէս որ առաջին տարին էր քանի ձեմարանը իւր սեփական վարժոյը չունէր, այլեւ ձեմարանի առաջին դասարանն էլ փոխադրվում էր այնտեղ, այն յուսով, որ եթէ փորձը յաջողէր, ապագայում ձեմարանի Բ.

եւ Գ. դասարաններն եւս վտխադրուէին եւ այսպէս թէ մեր լսարանցիների վարժութեան ասպարէզը կլայնանար եւ թէ ձեմարանը աւելի կանոնաւորուած դպրոցական մաս կունենար տնտեսական զգալի թեթեւութեամբ: Բայց կառավարել մի դպրոց մի քանի բաժանմունքներով միայն վարժուող ուսանողների միջնորդութեամբ անհնարին է. հարկաւոր էր նշանակել օժանդակ ուսուցիչներ. մենք խոստացանք, բայց մեզանից միանգամայն անկախ պատճառներով չկարողացանք մեր խոստումը կատարել, որով թէ վնասեցինք վարժոցի ուսման կանոնաւորութեանը եւ թէ չափազանց ծանրաբեռնեցինք մեր լսարանցիներին գործնական պարապմունքներով ի վնաս նոցա տեսական զբաղմունքների: Դժբաղդաբար առաջիկայ տարին եւս նոյն անյաջող հանգամանքներով ենք սկսում, ուստի Բ. եւ Գ. դասարանների միացման խնդիրը վարժոցի հետ դարձեալ պէտք է յետաձգուի:

Վարժոցի կազմակերպութեան եւ մեր ուսանողաց գործնական պարապմունքների ղեկավարութեան մասին անցեալ տարուայ տեղեկագրիս մէջ հանգամանօրէն խօսել ենք. ուստի աւելորդ է նորից կրկնել այն ամենը. միայն այսքանս բաւական է ասել, որ առանձին վարժոյ ունենալով բոլոր յարմարութիւնների հետ ի միասին մենք անյարմարութիւններ եւս ունինք, որոնց սակաւը թէեւ այս տարի չենք կարողացել առնել, բայց ապագայի համար անշուշտ տնօրինելու է. մենք չունինք վարժոյի համար շինութիւն. հին ծառանգաւորաց Դպրոցի շինութիւնը իւր անյարմարութիւններով ամենին յայտնի է. դորանից երեխայ կրթել կարող ենք ասել անհնարին է: Միւս կողմից վարժոյ մտնել ցանկացողների թիւը այնքան մեծ է, որ ամենքին չենք կարողանում բաւականութիւն տալ, շատերը մնում են դուրսը: Բայց եւ այնպէս ստիպուած ենք լինում ամեն մի բաժանմունքի մէջ շատ երեխաներ ընդունելու: Աշակերտաց շատութիւնը թէ շինութեան կողմանէ անյարմար է, քանի որ նստելու տեղ չկայ մեր մուտք եւ փոքր սենեակներում եւ թէ այն կողմից, որ նորավարժ ուսուցչաց գործն է դժուարեցնում եւ ի հարկէ այսպիսով վարժոյի յառաջադիմութեանը արգելք լինում: Վաղարշապատում անցեալ տարի գոնեայ մի ծխական դպրոց կար, ուր կարող էին դիմել մեզ մօտ չընդունուածները, իսկ այս տարի այդ դպրոցը փակուեցաւ եւ մենք ստիպուեցանք այնքան ա-

չակերտ ընդունել, որ չենք կարողանում տեղաւորել մեր սենեակներում: Մի ահագին բազմութիւն էլ դեռ դուրսը մնաց: Այս հանգամանքը գրաւել է Ամենապատիւ Սրբազան Տեղակալ Հօր ուշադրութիւնը եւ լիայոյս ենք որ վաղարշապատցիք չեն խնայելու իւրեանց ձեռնտուութիւնը այս գործում եւ այս տարի իսկ կը հոգան վերացնելու գոնեայ մեր ունեցած անյարմարութիւնների մի մասը: Սորա համար հարկաւոր է որ Վաղարշապատը կամ ունենայ իւր առանձին դպրոցը եւ մենք վարժոցի ամեն մի բաժանմունքի մէջ պահենք ոչ աւելի քան 20—25 աշակերտ եւ կամ գոնեայ մի այնպիսի բնակարան տայ, ուր կարողանանք զետեղել վարժոցի մի երկու բաժանմունքի աշակերտներին: Եթէ այս չլինի մենք ստիպուած կլինինք կարճելու աշակերտաց թիւը:

Ուսումնական ժողովը դեռ առաջի տարուանից սկսել էր գբաղուիլ ընդհանուր ծրագրի կազմութեամբ եւ սորա համար լրագրութեան միջոցով դիմեց հայ հասարակութեանը խնդրելով նպաստել այդ գործին խորհուրդներով, ծրագիրներով, դիտողութիւններով եւայլն: Մեր հրաւէրը մնաց միանգամայն առանց ուշադրութեան, չնայելով որ մեր կազմելի ծրագիրը միայն ձեմարանիս համար չէր, այլ բոլոր ազգային ուսումնարանաց: Այս պատճառով անցեալ տարի ծրագրի գործը մնաց անկատար: Այս տարի էլ դիմեցինք արդէն ի ձեռն Ս. Սինոդի մեր թեմական վերատեսուչներին խնդրելով նոցանից իւրեանց իրաւասութեան ներքոյ եղած ուսումնարանների ծրագիրները իւրեանց անձնական դիտումներով հասցնել մեզ եւ դարձեալ մեր խնդիրը մնաց առանց պատասխանի: Ուստի մենք կազմեցինք մի ծրագիր, որ առաջարկումենք հայ հասարակութեան քննադատութեանը:

Մեր ծրագրով բոլոր ազգային ուսումնարանները չորս կարգի են բաժանվում, իւրաքանչիւրը երեք տարուայ ընթացքով: Այս ուսումնարաններն են. ծխական դպրոց, հոգեւոր դպրոց դպրանոց եւ ճեմարան: Ծխական եւ հոգեւոր դպրոցները պէտք ունենան եւ չորրորդ լրացուցիչ դասարաններ այն աշակերտաց համար, որոնք իւրեանց ուսումը շարունակելու չեն: Այդ լրացուցիչ դասարանների համար մենք ծրագիր կազմած չու-

նինք: Մեր դանկութիւնն է եղել ուսումնարանների ծրագիրը այնպէս կազմել, որ մի դպրոցից միւսը՝ բարձրը մանուլը այն անյարմարութիւնները չունենայ, ինչ որ մենք ամեն քայլափոխում հանդիպումենք: Մեր ծրագիրը կարող է փոփոխութիւնների ենթարկուել եւ այդ կողմից մենք ամենայն շնորհակալութեամբ կլսենք ազգային բոլոր ուսումնարանաց մանկավարժական խորհուրդների եւ վարձառու անձանց դիտողութիւնները, բայց մի բան միայն ցանկալի պէտք լինի, որ մեր զանազան կարգի ուսումնարանները իւրեանց ծրագրով իւրեար հետ աներա կապուած լինին:

Ահա մեր ծրագիրը.

—

ԾՐԱԳԻՐ.

ՎԱՐԺՈՑ (Ծխական դպրոց)

1. Բարոյակրթութիւն.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը իբրև անդամ ընկերութեան՝ պարզ և ընտանեկան դաստիարակութեամբ, որպէս նկարագրում է մեր ազգային բանաստեղծութիւնը.

Ձեռնարկ՝ Ազգային ընտանեկան աշխարհ պ. Ս. Մանդինեանի.

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը ժողովրդեան հրեական սութեամբ իբրև դիւցազնացեալ անդամ ընկերութեան.

Ձեռնարկ՝ Ազգային դիւցազնական աշխարհ պ. Ս. Մանդինեանի.

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մարդը իբրև անդամ ընկերութեան իւր պարզ նախնի և պատմական կեանքով.

Ձեռնարկ՝ Նահապետական և հայրենի աշխարհ պ. Ս. Մանդինեանի.

2. Կրօն.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Աղօթք. բացատրել ոչ միայն աղօթքների իմաստը, այլ և առանձին խնամքով վերացնել երեխայոց անիմաստ աղօթասացութիւնը, ջանալով որ աղօթքը նոցա զգացմանց արտայայտութիւն լինի.—Տօների նախընթաց օրերը ծանօթացնել երեխայոց այդ տօների հետ և բացատրել.—Շաբաթական խրատ վարժոցի բոլոր աշակերտաց համար իմաստին, նիւթ

առնելով նոցա շարաթական կեանքից և քարոզելով նոցա Աստուածային պատուէրները։

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը աւելի ընդարձակելով և տեղեկութիւն տալով ժամասացութեան գլխաւոր կտորների մասին։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը։

3. Զննական Ո—ասոմ.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նիւթ առնել բարոյակրթութեան դասերից, տարուայ եղանակներից և կեանքից. զոր օրինակ՝ ուսումնարան, ծնողական տուն, մարդ և անասուն, ժամանակ և եղանակ, ամառ և ձմեռ և այլն, ինչպէս ցոյց է տուած ազգային ընտանեկան աշխարհի ուսուցչաց համար նշանակուած մասի մէջ։

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նիւթ առնել նոյն աղբիւրներից. զոր օրինակ՝ ուսումնարան, աշունք, տուն, քաղաք, աշնան վերջին օրերը, ընտանի կենդանիներ, ձմեռ, նոր տարի, մարդկային կեանք, աշխատանք, նիւթեր, գոյք, ձևեր, կշռոք, զարունը պարտիզում և դաշտում, ընտանի կենդանիներ. ամառ և այլն։ Տեղագրութիւն Սասունցի Դաւթի։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյն խորագրերը աւելի ընդարձակ. հովուական և երկրագործական կեանք իւրեանց մանրամասնութիւններով. և իրրև լրումն տալ համառօտ տեղեկութիւններ միւս դասակարգերի մասին։ Մարդկային արուեստագիտական առարկաների մասին խօսելիս տարրական տեղեկութիւններ տալ ֆիզիքայից և քիմիայից։ Հայրենիքի և Պաղեստինէի համեմատական աշխարհագրութիւնը։ Երկրի գնդաձևութիւնը։ Պարզ յիշատակութիւն աշխարհի մասերի։

4. Հայոց լեզու։

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Սկզբնական ուսումն գրագիտութեան, նախ գրել և ապա կարդալ։ Պէտք է այնքան վարժել, որ մանուկը կարողանայ կարդալ բառ առ բառ ամեն գիր, և եթէ այդ դժուար լինի, փորձէ լուծել բառը վանկերի և վանկերը հնչիւնների՝ սկսելով ձայնաւորից և հետ գնելով նորան բաղաձայնները։ Պէտք է կարողանայ գրել, եթէ ոչ անսխալ, գոնեայ ըստ արտասանութեան ուղիղ։ Բերանացի հեքիաթներ և անգիր ոտանաւորներ։

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նախադասութիւններով և առոգանութեան նշաններով կարդալ. թելատրութեամբ գրելու վարժութիւն, ուղղագրութիւնը ստուգել. հարցերով լուծել նախադասութիւնը, ուղիղ արտագրել առանձին տետրակի մէջ սխալ գրած բառերը, կազմելով նոցանից համապատշաճ խմբեր։ Կարդացածի համառօտ պատմութիւն և գրութիւն։ Անգիր ոտանաւորներ։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Կարդացածի բովանդակութիւնը հասկանալ, վարժել գեղեցիկ ընթերցանութեան և այն՝ ամբողջ պարբերութեամբ։ Սկզբունք քերականութեան. մասանց բանից որոշումն, հոլովումն և խոնարհումն, ուղղագրութեան կանոններ, թելատրութեամբ անսխալ գրել. կարդացածի բնաբաններով փոքրիկ շարադրութիւններ։ Անգիր ոտանաւորներ։

5. Ռուսաց լեզու։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Գրել կարդալու սկիզբն. շուտով սկսել Ռուսաց լեզուով ղրուցադրութիւն. ամեն մի հայերէն ասած նախադասութիւն կրկնել ռուսերէն թէ խմբովին թէ առանձին ընտելացնելով աշակերտաց լսողութիւնը ուղիղ արտասանութեան։ Ժամանակի ամենափոքր մասը պէտք է նուիրել թարգմանութեան և հայերէն խօսակցութեան։ Տարուայ վերջը հայերէնը պէտք է լսուի միայն թարգմանելիս։

6. Թուաբանութիւն.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն թուերի 1-ից մինչև 10 ը ամեն գործողութիւններով և զննական, բանաւոր, մտաւոր և գրաւոր վարժութիւններով, Մանկավարժական Թերթի մէջ տպած հրահանգների համաձայն։

Ձեռնարկ՝ Հէնչէլի Թուաբանական խնդիրներ։

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն թուերի մինչև 100 ը նոյն վարժութիւններով. պէտք է վարժութիւններով սովորեցնել աշակերտներին բառնալու խնդիրների մէջ պատահած դժուարութիւնները։ Այս դասերին պէտք է տալ նաև ծանօթութիւն կեանքի այլ և այլ հանգամանքների մասին։

Նոյն ձեռնարկը և իրրև հրահանգ ուսուցչի համար Կեանքի հանգամանքների համեմատ թուաբանութիւն պ. Ս. Մանդինեանի։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Ծանօթութիւն ամեն թուերի հետ նոյն վարժութիւններով. տարրական կոտորակներ։ Շարունակութիւն թուաբանական իրագիտութեան։

Երկրաչափական ծանօթութիւն մարմինների հետ զննական եղանակով և մակարդակ կազմելու վարժութիւններ։

Չեռնարկ՝ կեանքի հանգամանքների համեմատ թուաբանութիւն, մասն վերջին։

7. Գրա–ըն–ն.

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Կարդալուց առաջ վարժել տարրական գրութեան և գծագրութեան քարետախտակների վերայ. այնուհետև գրել բառեր, կազմելով նոցա վանկերից,

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մելանով և գրչով գրել խումբ խումբ միատեսակ թէ փոքր թէ մեծ տառեր ըստ իւրեանց ծագման գծերից, վարժեցնել բառեր և նախադասութիւններ գեղեցիկ գրելու։

Չեռնարկ—Մակար Տէր Սարգսեանի։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը շարունակել, սկսելով և ուսուց գեղագրութիւնը։

Նոյն ձեռնարկը։

8. Երգեցո–ղու–թիւն:

Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Մանկական երգեր խմբով և դաշնակի ձայնակցութեամբ։

Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Աղգային և Եկեղեցական երգեցողութիւն։

Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

Նոյնը։

Հ ր ա մ ա ն ք բոլոր բաժանմունքների համար հայրենագիտական տեղեկութիւններ ժողովելու նպատակով. երկրագործական ազատ պարապմունքներ. կազմութիւն զանազան ժողովածուների։

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

ՎԱՐԺՈՑԻ.

ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ		
	Ա.	Բ.	Գ.
1. Բարոյակրթութիւն	3	3	2
2. Կրօն	1	2	2
3. Զննական ուսում	2	3	2
4. Հայոց լեզու	4	4	4
5. Ռուսաց »	»	»	6

6·	Թուաբանութիւն	4	5	3
7·	Գրութիւն	2	3	2
8·	Երգեցողութիւն	2	2	1
	Գումար	18	22	22

Ծանօթութիւն.

Այս դասացուցակը տարուայ ընթացքում ըստ հանգամանաց կարելի է փոփոխութեան ենթարկել։

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ.

1· *կրթն.*

Ա. ԴԱՍԱՐԱՆ

Սրբազան Պատմութիւն Հին և Նոր Կտակարանի

Ձեռնարկ—Սրբազան Պատմութիւն Հայորդւոյ։ Բերանացի բացատրութիւն եկեղեցական գլխաւոր տօների։

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Նոյնը և ժամակարգութիւն։

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Համառօտ պատմութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Ձեռնարկ՝ Մելքիսեդեկ եպիսկոպոսի Մուրատեան (հանելով սորա միջից եկեղեցական մատենագրութեան և քաղաքական պատմութեան վերաբերեալ մասերը)։

Հանգանակ հաւատոյ։

2· *Հայոց լեզու.*

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. կազմութիւն նախադասութեան — Ա. մասն քերականութեան։

Ձեռնարկ ուսուցչի համար — Քերականութիւն պ. Ս. Պալասանեանի, իսկ աշակերտի համար — պ. Կ. Կոստանեանի Հիւնուածքի աշխարհաբարը։ Ցարմարաւոր ոտանաւորներ։ Գրաւոր պարապմունք — կարդացածի բովանդակութիւնը գրել։

Իրրև նախապատրաստութիւն գրաբառի, կարդալ Ս. Աւետարանի առակները։

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

*Աշխարհաբար. Բ. մասն քերականութեան։ Աշակերտաց ընթերցանութեան համար ընտրել մի որ և է յարմարաւոր դիրք (զօր. Անահիտ, Խօսող կաղնի եւայլն)։ Անգիր ոտանաւորներ։ Գրաւոր պարապ-

մունք — ոտանաւորները արձակի փոխել· պարզ շարադրութիւններ տարուայ դասընթացի գիտութիւններից·

Գրաբառ· Ա· մասն քերականութեան· Ընթերցանութեան գիրք Ծաղկաքաղի Ա մասն պ· Կ· Կոստանեանի· Քերականութեան ձեռնարկ՝ Խոնարհումն բայից և հոլովումն անուանց պ· Կ· Կոստանեանի· Գրաւոր պարապմունք — թարգմանել դասագրքից գրաբառից աշխարհաբար·

Գ· ԴԱՍԱՐԱՆ·

Աշխարհաբար· Ծանօթութիւն արևմտեան աշխարհաբարի· Աշակերտաց համար ձեռնարկ «Ճաշակ Հայ մատենագրութեան»· կարդալ և փոխադրել արևելեան աշխարհաբարի բերանացի և գրաւոր· Գրաւոր պարապմունք տարուայ դասընթացի գիտութիւններից·

Գրաբառ· Բ· մասն քերականութեան, պարզ շարադրութիւն· Ձեռնարկ՝ Ծաղկաքաղի Բ· մասն պ· Կ· Կոստանեանի և Գարագաշեան քերականութիւն· Գրաւոր պարապմունք — թարգմանել աշխարհաբարից գրաբառ· փոխադրել ոտանաւորները արձակի·

3· Ո՜ռաայ լեզու·

Ա· ԴԱՍԱՐԱՆ·

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և գրութիւն (արտագրելով և թելատրելով)· անգիր ոտանաւորներ·

Ձեռնարկ· Нашъ другъ Корфа կամ книга для чтенія Паульсона և կամ մի այլ գիրք համապատշաճ ընտրութեամբ·

Բ· ԴԱՍԱՐԱՆ·

Ընթերցանութիւն, թարգմանութիւն, գրութիւն (թելատրութիւն)· Անգիր ոտանաւորներ· Ծանօթութիւն պարզ նախադասութիւնների, հոլովումն կանոնաւոր անուանց և խոնարհումն կանոնաւոր բայերի·

Ձեռնարկ՝ Дѣтскій Міръ 1 ч· Ушинскаго·

Գ· ԴԱՍԱՐԱՆ·

Ընթերցանութիւն, թարգմանութիւն, կարդացածը ռուսերէն պատմել· Անգիր ոտանաւորներ· Ոտանաւորները արձակի վերածել և գրել· Անկանոն անունների և բայերի հոլովումն և խոնարհումն·

Ձեռնարկ՝ Христоматія Поливанова·

4· Մաթեմատիկա·

Ա· ԴԱՍԱՐԱՆ·

Թուաբանութիւն· Թուաբանական չորս գործողութիւնները ամբողջ թուերի հետ· Ձեռնարկ՝ Կանոնքի հանգամանքների համեմատ թուաբանութիւն պ· Ս· Մանդինեանի·

Երկրաչափական գծագրութիւն նկարչութեան հետ·

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Թուաբանութիւն — Թուաբանական չորս գործողութիւնները կոտորակների հետ։ Ձեռնարկ՝ Թուաբանական խնդիրներ Սիմէօնեանի և Վարժելեանի։

Տարրական երկրաչափութիւն (Գծաչափութիւն)։

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Թուաբանութիւն։ Երկրի կանոնները։

Հանրահաշիւ (Ալգեբրա)։ Ալգեբրայական չորս գործողութիւններ։ Հաւասարութիւններ Ա. աստիճանի։ Յարաբերութիւններ։

Տարրական երկրաչափութիւն (Հարթաչափութիւն)։

5. ԸՆՔՀԱՆՈՒՐ ՊԱՊՈՒԼԻՆ.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Արևելք և Ծունաստան։

Ձեռնարկ Վելտերի, Թարգ. պ. Ն. Ղուկասեանի։

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Հռոմ։

Նոյն ձեռնարկը։

6. ԸՆՔՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԼԻՆ.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհագրութեան Բնական և Աստեղաբաշխական տարերքը։

Ձեռնարկ — պ. Ն. Սիմէօնեանի

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Ասիա, Աֆրիկա, Ամերիքա և Աւստրալիա։

Նոյն ձեռնարկը։

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Եւրոպա։

Նոյն ձեռնարկը։

7. ՀԱՅՈՑ ՊԱՊՈՒԼԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Հայոց պատմութիւն կենսագրական եղանակով և Հայաստանի Աշխարհագրութիւն։

8. ՌՈՒՍԱՑ ՊԱՊՈՒԼԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԼԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Ռուսաց պատմութիւն կենսագրական եղանակով և Ռուսաստանի աշխարհագրութիւն (Ռուսաց լեզուով)։

9. Բնական պատմ–ից.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Բնութեան երեք թագաւորութիւնները.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Նոյնը

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Նոյնը.

10. Զոյնագրո–ից.

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Զոյնաստիճանների սկզբնական վարժութիւն. Տեսողութեան արժէքի վարժութիւններ. բաղմամեց ընդհանուր կրթութիւն. գրելով և երգելով ուսուցուման նախնական աձ. ակ. բձ. բկ. շարականի եղանակների. Ազգային երգեր.

Ձեռնարկ Թաշճեանի.

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Ուսուցուման նախնական գձ. գկ. դձ. դկ. շարականի եղանակների.

Նոյն ձեռնարկը.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Ուսուցուման շարականի ուղը ձայների դարձուածքների, մեղեդիների և եկեղեցական տաղերի.

Նոյն ձեռնարկը.

11. Գեղագրո–ից.

Ա. և Բ. դասարանների մէջ Հայոց, Ռուսաց և Տաճկերէն (Տաճկահպատակների համար) գեղագրութիւն.

12. Գծագրո–ից և Նկարչո–ից.

Բոլոր երեք դասարանների համար.

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

ԴՊՐՈՑԻ

ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԴԱՍԱՐԱՆՆԵՐ.		
	Ա.	Բ.	Գ.
1. Կրօն.	3	3	3
2. Հայոց լեզու.	5	4	4
3. Ռուսաց »	5	6	6
4. Մաթեմատիքա.	4	4	4
5. Ընդհանուր Աշխարհագրութիւն.	2	2	3

6·	Ընդհանուր Պատմութիւն·	»	2	2
7·	Հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն·	»	2	»
8·	Ուսուց պատմութիւն և աշխարհագրութ·	»	»	3
9·	Բնական պատմութիւն·	2	3	2
10·	Ձայնագրութիւն·	4	2	2
11·	Գծագրութիւն և նկարչութիւն·	2	1	1
12·	Գեղագրութիւն·	3	1	»
	Գումար·	30	30	30

ԴՊՐԱՆՈՑ

1· կրօն·

Դ· ԴԱՍԱՐԱՆ·

Քրիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ· Ձեռնարկ—Հրաչանգ Մսերի·

Կարգ Աստուածպաշտութեան— Մեկնութիւն արարողութեան Ս· Պատարագի·

Ե ԴԱՍԱՐԱՆ·

Ընթերցանութիւն Հին Կտակարանի հանդերձ բացադրութեամբ·

Զ· ԴԱՍԱՐԱՆ·

Ընթերցանութիւն Նոր Կտակարանի հանդերձ բացադրութեամբ· Եկեղեցական Տօմար·

2· Հայոց լեզու·

Դ· ԴԱՍԱՐԱՆ·

Աշխարհաբար· Տեսութիւն մատենագրութեան·

Ձեռնարկ—Ծաղկաքաղ հատուածք հին և նոր մատենագրութեան· Վենետիկ·

Գրաբառ· ընդարձակ քերականութիւն·

Ձեռնարկ—Տարերք քերականութեան Բագրատունւոյ·

Ընթերցանութեան գիրք—Եզնիկ և Ծաղկաքաղի Գ· մասը պ· Կ· Կոստանեանի·

Գրաւոր պարապմունք—Շարադրութիւն նկարագրական և պատմական բովանդակութեամբ· Անգիր հատուածներ·

Ե· ԴԱՍԱՐԱՆ·

Աշխարհաբար· Հայոց մատենագրութեան պատմութիւնը մինչև ԺԲ· դարը·

Գրաբառ· շարադրութիւն՝ ճառեր·

Ընթերցանութեան գիրք՝ Հատընտիրք, Վենետիկ և Գ. գիրք Խոր-ենացւոյ. Անգիր հատուածներ.

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշխարհաբար. Հայոց մատենագրութեան պատմութիւնը մինչև ԺԸ. դարը.

Գրաբառ. շարադրութիւն—խորհրդածութիւններ.

Ընթերցանութեան գիրք—Լամբրօնացւոյ ճառերը. Անգիր հատուածներ.

3. Ռուսաց լեզու:

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և բերանացի պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից. Առակներ և անգիր ոտանաւորներ.

Քերականութիւն — Վերլուծութիւն բարդ նախադասութիւնների. Գրաւոր պարապմունք — Փոխատրութիւն ոտանաւորների արձակի, թարգմանութիւն հայերէնից ռուսերէն.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն, թարգմանութիւն և բերանացի պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից. Առակներ և անգիր ոտանաւորներ.

Քերականութիւն. Ստուգաբանութիւն. Ձեռնարկ Грамматика Говорова, курсъ I и II.

Գրաւոր պարապմունք — շարադրութիւն նկարագրական բովանդակութեամբ.

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Ընթերցանութիւն և պատմութիւն Ռուսաց հեղինակների գրուածքներից. Անգիր ոտանաւորներ և արձակ գրուածքների հատուածներ.

Քերականութիւն — Համաձայնութիւն. Ձեռնարկ Грамматика Говорова, курсъ III и IV.

Գրաւոր պարապմունք — շարադրութիւն պատմական բովանդակութեամբ.

Ծանօթութիւն.

Ընթերցանութեան և ոտանաւորների համար Դ. Ե. Զ. դասարանների մէջ առաջարկվում է. Փուկովսկի, Պուշկին, Գոգոլ, Կրիլով, Գլիբոեոտով, Կոլցով, Տօլստոյ, Գոնչարով, Նեկրասով, Լերմոնտով.

4. Ֆրանսերէն.

Դ. ԴԱՍԱՐԱՆ.

Նախապատրաստական ընթերցանութիւն և գրութիւն. — Հրահանգ—Մարգոյի դասագրքի Ա. մասը քերականական կանոնների բացատրու-

թեամբ։ Նոյն հրահանգների համեմատ գրաւոր վարժութիւն։ Բերանացի թարգմանութիւն Մարգոյի ընթերցանութեան համար նշանակած դիւրահասկանալի հատուածների։ Անգիր սերտողութիւն թեթև ոտանաւորների։

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Մարգոյի Բ. մասի հրահանգները քերականական կանոնների բացատրութեամբ։ Գրաւոր վարժութիւն նոյն հրահանգների համեմատ։ Թարգմանութիւն նկարագրական և պատմական հատուածներից Մարգոյի։ Անգիր սերտողութիւն առակների հատուածների և ոտանաւորների։

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Մարգոյի Գ. մասի հրահանգները քերականական կանոնների բացատրութեամբ։ Գրաւոր վարժութիւն նոյն հրահանգների համեմատ։ Բերանացի թարգմանութիւն Էվրէի ծաղկաքաղից։ Անգիր սերտողութիւն ոտանաւորների (հատուածներ)։

5. Հանրահաշիւ.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Ինքնապատկութիւն, արմատ, անհամաչափ քանակութիւններ։ Բանակութիւններ կոտորակ և բացասական աստիճաններով։ Արմատներով հաւասարութիւններ։ Հաւասարութիւն բ. աստիճանի։ Ծառաջատութիւն։

Ձեռնարկ — Руководство Алгебры Малинина и Буренина, Алгебра Бычкова, Задачникъ Пржевальскаго.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Լոգարիթմոս (նշանակ)։ անչափ աստիճաններով հաւասարութիւններ, անորոշ հաւասարութիւններ։ Հաւասարութիւնների հետազօտութիւն։

Նոյն ձեռնարկները։

Զ. ԴԱՍԱՐԱՆ

Կրկնութիւն հանրահաշուի։ Նիւտոնի բինոմը։ կարգեր։ անորոշ գործակիցների եղանակ։ Ալգեբրայական քանակութիւնների ամենամեծ և ամենափոքր նշանակութիւնները։

Կրկնութիւն թուաբանութեան։

6. Երկրաչափութիւն.

Գ. ԴԱՍԱՐԱՆ.

Գծաչափութիւն և հարթաչափութիւն։

Ձեռնարկ Руководство къ Геометріи Давидова.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Ծաւալաչափութիւն.

Նոյն ձեռնարկը։

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Կրկնութիւն Երկրաչափութեան։

7. Տ–ան կ–ն ալ ափ–ն–ի–ն.
Զ. ԴԱՍԱՐԱՆ.
Հարթ եռանկիւնաչափութիւն,
Ձեռնարկ — Тригонометрія Малинина.
8. Տիեզերագր–ն–ի–ն.
Զ. ԴԱՍԱՐԱՆ.
Համառօտ աստղաբաշխութիւն,
Ձեռնարկ Космографія Малинина.
9. Ընդհանուր պատմ–ն–ի–ն.
Դ. ԴԱՍԱՐԱՆ.
Միջին դարեր.
Ձեռնարկ — Հուլգին և Իլովայսկիյ.
Ե. ԴԱՍԱՐԱՆ.
Նոր դարեր.
Ձեռնարկ — Իլովայսկիյ.
Զ. ԴԱՍԱՐԱՆ.
Նորագոյն ժամանակ և կրկնութիւն ամբողջ ընդհանուր պատմութեան,
Նոյն ձեռնարկները.
10. Հայոց պատմ–ն–ի–ն.
Դ. ԴԱՍԱՐԱՆ.
Հին պատմութիւն մինչև Դ. դարը,
Ե. ԴԱՍԱՐԱՆ.
Դ. դարից մինչև ԺԲ. դարը,
Զ. ԴԱՍԱՐԱՆ.
ԺԲ. դարից մինչև ԺԹ. դարը,
Կրկնութիւն ամբողջ Հայոց պատմութեան,
11. Ռ–ս–ա–ց պատմ–ն–ի–ն. (Ռուսաց լեզուով):
Ե. ԴԱՍԱՐԱՆ.
Հին պատմութիւն մինչև ԺԷ. դարը,
Ձեռնարկ Իլովայսկիյ.
Զ. ԴԱՍԱՐԱՆ.
Նոր պատմութիւն ԺԷ. դարից մինչև ԺԹ. դարը,
Նոյն ձեռնարկը,
Կրկնութիւն ամբողջ Ռուսաց պատմութեան,
12 Բնագիտ–ն–ի–ն (*Ֆիզիքա*).
Դ. ԴԱՍԱՐԱՆ.
Փորձնական ֆիզիքա — Մագնիսականութիւն, Էլեքտրականութիւն և ընդհանուր տեղեկութիւններ միւս զօրութեանց մասին,
Ձեռնարկ — Բնագիտութիւն Տէրաէրեանի.
Ե. ԴԱՍԱՐԱՆ.
Գալվանականութիւն, ջերմութիւն, լրաբաշխութիւն, օդաչափութիւն և ձայն,
Ձեռնարկ — Физика Малинина
Զ. ԴԱՍԱՐԱՆ.
Զօրութիւններ, մեքենաներ, շարժողութիւն, լոյս,
Նոյն ձեռնարկը,
Կրկնութիւն ամբողջ ընթացքի՝ լրացմամբ,
13. Քիմիա.
Դ. ԴԱՍԱՐԱՆ.
Անդորձարանաւոր քիմիա.
Ձեռնարկ Основанія Химіи Бокій.

Ե. ԴԱՍԱՐԱՆ.

Գործարանաւոր քիմիա։
Նոյն ձեռնարկը։

14. Մարդաբանութիւն և Ընկերաբանութիւն.

Զ. ԴԱՍԱՐԱՆ.

Համառօտ՝ մարդու կազմուածքը և կեանքը։

—

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

ԴՊՐԱՆՈՑԻ.

	ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԴԱՍԱՐԱՆՆԵՐ. Դ.	Ե.	Զ.
1.	Կրօն	3	2	3
2.	Հայոց լեզու	2	2	2
3.	Տեսութիւն մատենագրութեան	4	»	»
4.	Հայոց մատենագրութեան պատմութիւն	»	3	3
5.	Ռուսաց լեզու	5	4	3
6.	Ֆրանսերէն	4	4	3
7.	Մաթեմատիքական գիտութիւններ	4	4	4
8.	Ընդհանուր պատմութիւն	2	2	3
9.	Հայոց պատմութիւն	2	2	2
10.	Ռուսաց պատմութիւն	»	2	2
11.	Ֆիզիքա	2	3	3
12.	Քիմիա	2	2	»
13.	Մարդակազմութիւն և ընախօսութիւն	»	»	2
	Գումար	30	30	30

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍԱՑՈՒՑԱԿ

ՁԵՄԱՐԱՆԻ.

	ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԼՍԱՐԱՆՆԵՐ. Ա.	Բ.	Գ.
1.	Ընդհանուր Եկեղեցական պատմութիւն	2	»	»
2.	Մեկնութիւն Ս. Գրոց	»	2	2
3.	Եկեղեցական մատենագրութիւն Հայոց	»	»	3
4.	Հայոց լեզու	2	»	»
5.	Նոր մատենագրութիւն Հայոց	2	»	»
6.	Քննական քերականութիւն	2	»	»
7.	Հնախօսութիւն Հայաստանի	»	3	»
8.	Տրամաբանութիւն	2	»	»
9.	Մանկավարժութիւն	2	»	»
10.	Բարոյական Փիլիսոփայութիւն	»	»	2
11.	Հոգեբանութիւն	»	4	»
12.	Մեթոդիքա	»	»	2
13.	Ընդհանուր գրականութիւն	2	2	2
14.	Ռուսաց գրականութիւն	2	2	2
15.	Գերմաներէն	3	3	4
16.	Ֆրանսերէն	3	2	1
	Գումար	22	18	18

(Շարունակելի)։

Երեւանի թեմ.

Ալեխումնդրօպօլ եւ վիճակն.	Յովսէփ ա. քհ. Կոստանեան
Ախուրեան	» Եղիշէ վարդապետ Ամատունի
Մասսարա	» Խաչատուր քհյ. Տէր Թադէոսեան Թալինում
Գառնիբասար	» Շմաւօն քհյ. Աբրահամում
Ղրր Բայազիտ Գարապիլագ ա. Գարապիլագ բ.	Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեան
Գողթնի	» Հայրապետ Աբրահամեանց վ. Ադուլիսում
Գարապագեազ	» Սողոմոն քհյ. Տ. Ղազարեան Ջանաղչում
Երեւան եւ Ջանգիբա.	Գէորգ քհյ. Թաղիանոսեան Երեւանում
Ջանգեազօր	» Իսրայէլ քհյ. Յարութիւնեան, Գեօրիսում
Կարս	» Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեան
Կողբ	» Յովսէփ քհյ. , Կողբում
Կոտայք	» Յովհան Աւագ քհյ. Արամուսում
Մեղրի	» Գէորգ քհյ. Տ. Գրիգորեան
Նախիջեւան Հին	» Հոգեւոր Կառավարութիւն Հայոց
Շարուր	» Թադէոս քհյ. Տ. Յովհաննիսեան Նորաշէնում
Վաղարշապատ Սարդարապատ Զկյվայ Աղջաղալա	
Ծուրմալու	» Սիմէօն քհյ. Տ. Ահարոնեան Փանիկում
Տաթեւ	» Հոգ. Կառավարութիւն Հայոց
Օշական	» Եսայի Ա. քհյ. Ամատունի

Թիֆլիսի թեմ.

Ախալցխա	Հ. Կառավարութիւն Հայոց.
Ախալքալաք	Խորէն ա. քհյ. Բարսեղեան
Գանձակ	Հոգեւոր Կառավարութիւն Հայոց
Գօրի	Հոգեւոր Կառավարութիւն Հայոց
Դիլիջան	Ստեփաննոս քհյ. Խալաթեանց վ. Ադդանու.
Թուշեթ	Աղէքսանդր քհյ. Տ. Յովհաննիսեան
Թէյուռեւ շրջակայքում	Գէորգ ա. քհյ. Տէր Սարգսեան
Թիֆլիս	Թադէոս Աւագ քհյ. Խոջաէյնաթեան
Մեծ Զարաքիլիսա եւ շրջակայքում	Արսէն Աւագ քհյ.
Ծղնախ	Ստեփաննոս ա. քհյ. Տէր Ստեփանոսեանց
Ծուրաւ	Յովսէփ ա. քհյ. Առիւծեան
Քութայիս	Գաւիթ ա. քհյ. Եարալեան

Ղարաբաղի թեմ.

Նուխի եւ շրջակայք.	Հոգեւոր Կառավարութիւն Հայոց
Շուշիեւ շրջակայքում	Կոնսիստորիային Հայոց

Շամախու թեմ.

Բագու	Խորէն քհյ. Միրզաբեկեանց
Ղուբայ	Աւագ քհյ. Աւշարեան
Շամախի	Սարգիս ա. քհյ. Փիրվերտեանց
շրջակայքում	Մեսրովբ քհ. Տ. Սարգսեանց Գիլրքում
Դարբանդ	Խորէն քհյ. Գալստեանց
Զմիւռնիա	Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրատեան
Կ. Պոլիս	Գէորգ Ծ. վարդապետ Բուսճուքլեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

—

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նոր հրատարակած գրքերը:

Ա. «Հայոց Մեծ վարդապետ Ս. Մեսրոպ». գինն է 30 կոպեկ. աշխատասիրութիւն Պ. Արամ Մելեանի:

Բ. «Հայ ժողովրդական աւանդութիւնները» գինն է 30 կոպեկ. ժողովածու Պ. Տիգրան Նաւասարդեանի:

Գ. «Սուրբ Երուսաղէմի Հայոց ազգային վանուց մասին տեղեկութիւնները. գինն է 1 րուբլի. գործ Մամբրէ վարդապետի Մարկոսեան Միաբան նուիրակի Ս. Երուսաղէմայ:

Դ. «Ազգայնութիւն եւ նորա Պրինցիպները» գինն է 30 կոպեկ. գործ Հ. Ա. Առաքելեանի.

Ե. Տասնամեակ Սահականուշեան օրիորդական Հոգեւոր դպրոցին Հայոց Աղէքսանդրապօլու:

Պ. Սարգիս Փիլոեանցը գրում է հետեւեալը

«Ես մտադիր եմ ամեն մի գրադարանին նուիրել իմ աշխատասիրած «Սոփերը» վերնագրով գրքոյկներից երկու երկու օրինակ, Ուստի թող բարեհաճեն գրադարանների ցանկացող վարչութիւնք, ուր ուրեք որ գտնվումեն յայտնել ինձ իւրաքանչիւրը իւր առանձին հասցէն, որպէս զի ես կարողանամ կատարել իմ մտադրութիւնս: Իմ հասցէն Новобаязетъ. Учителю Саркису Филоянцъ.